

I M A G I N E III

John Lennon



.....

Ջոն Լենոն



Ք
ա
տ
Կ
Ե
ր
ա
g
ը
Ե
ք

ՋՈՆ ԼԵՆՈՆ

Պատկերացրեք

(ծաղկաքաղ անտիպ գրքից)

Անգլերենից թարգմանեց
Խաչիկ Մանասեյանը

2022

Պլաստիկ Օնո նվագախումբ (1970)

Մայրիկ

Մայրի՛կ, դու ինձ ունեցար, բայց ես քեզ երբեք չունեցա.
Ես ուզեցի քեզ, դու ինձ չուզեցիր,
Ուստի պարզապես պետք է ասեմ քեզ՝
Մնա՛ս ու բարով, մնա՛ս ու բարով:

Հայրի՛կ, դու ինձ լքեցիր, բայց ես քեզ երբեք չլքեցի.
Ես քո կարիքն ունեցա, դու իմ կարիքը չունեցար,
Ուստի պարզապես պետք է ասեմ քեզ՝
Մնա՛ս ու բարով, մնա՛ս ու բարով:

Երեխաներ, մի՛ վարվեք այնպես, ինչպես ես վարվեցի.
Չէի կարողանում քայլել և փորձեցի վազել,
Ուստի պարզապես պետք է ասեմ ձեզ՝
Մնա՛ք բարով, մնա՛ք բարով:

[4x]

Մայրի՛կ, մի՛ գնա...
Հայրի՛կ, արի՛ տուն...

Պինդ կաց

Պինդ կաց, Ջո՛ն,
Ջո՛ն, պինդ կաց,
Լա՛վ է լինելու,
Դու կհաղթես այս կովում:

Պինդ կաց, Յոկո՛ ,
Յոկո՛ , պինդ կաց,
Լա վ է լինելու,
Դու կհասնես թռիչքիդ:

Երբ ինքդ քեզ հետ ես,
Եվ ուրիշ ոչ ոք չկա,
Հույսդ դիր քեզ վրա,
Եվ ինքդ քեզ ասա՝
Միայն թե պինդ կաց:

Պինդ կաց, աշխա՛րհ,
Աշխա՛րհ, պինդ կաց,
Լա վ է լինելու,
Դու կտեսնեք լույսդ:

Երբ դու մենակ ես,
Իսկապես մենակ,
Կարծես անում ես գործեր,
Որոնք երբեք չեն արվել.
Ուրեմն՝ պի՛նդ կաց,
Պի՛նդ կաց:

Բանվոր դասի հերոս

Հենց ծնվածդ պահից ստիպում են քեզ չնչին էակ զգալ,
Այդ ամենի փոխարեն ժամանակ չտալով.
Քանի դեռ ցավդ մեծ է, չես զգա քեզ այլ կերպ:

Բանվոր դասի հերոս, հարգդ բարձր պահիր,
Բանվոր դասի հերոս, հարգդ բարձր պահիր:

Տանը վիրավորել են, դպրոցում գլխիդ տվել.
Խելացի ես՝ կատեն, հիմար ես՝ կարհամարեն,
Իսկ եթե խենթ լինես, կազատվես նրանց կանոններից:

Բանվոր դասի հերոս, հարգո՛ւ բարձր պահիր,
Բանվոր դասի հերոս, հարգո՛ւ բարձր պահիր:

Քեզ տանջել, վախեցրել են 20 տարի շարունակ,
Հետո ակնկալել, թե կարիերա կանես,
Մինչդեռ գործունյա չես, քանզի լի ես վախով:

Բանվոր դասի հերոս, հարգո՛ւ բարձր պահիր,
Բանվոր դասի հերոս, հարգո՛ւ բարձր պահիր:

Քեզ սնել են կրոնի, սեքսի, TV թմրանյութով.
Էլ ինչպե՞ս լինեիր խելացի, անդասակարգ, ազատ.
Դեռ խեղճուկրակ գեղցի ես, ինչպես տեսնում եմ:

Բանվոր դասի հերոս, հարգո՛ւ բարձր պահիր,
Բանվոր դասի հերոս, հարգո՛ւ բարձր պահիր:

Նրանք ասում են քեզ՝ վերևում տեղ կա դեռ,
Բայց նախ պետք է սովորես սպանելիս ժպտալ,
Եթե ցանկանում ես նմանվել բլրի վրայի մարդկանց:

Բանվոր դասի հերոս, հարգո՛ւ բարձր պահիր,
Բանվոր դասի հերոս, հարգո՛ւ բարձր պահիր:

Ուզում ես հերոս լինել, ուղղակի հետևիր ինձ,
Ուզում ես հերոս լինել, ուղղակի հետևիր ինձ:

Մեկուսացում

Մարդիկ ասում են՝ ամեն ինչ պատրաստ է,
Մի թե չգիտեն, որ դողում ենք վախից:
Մեկուսացու՛մ...

Մենք վախենում ենք մենակ մնալ.
Բոլորը պետք է տուն ունենան:
Մեկուսացու՛մ...

Պարզապես մի տղա և մի աղջնակ
Փորձում են փոխել լայնարձակ աշխարհը:
Մեկուսացու՛մ...

Աշխարհը սոսկ մի փոքրիկ քաղաք է,
Եվ ամեն ոք փորձում է մեզ տապալել:
Մեկուսացու՛մ...

Չեմ ակնկալում, թե կհասկանաք,
Երբ այդքան շատ ցավ եք պատճառել:
Բայց այնուհանդերձ դուք մեղավոր չեք:
Սոսկ մարդիկ եք դուք՝ իսելահեղության գոհ:

Մենք վախենում ենք ամեն բանից,
Վախենում ենք արևից.
Մեկուսացու՛մ...

Արևը երբեք չի անհետանա,
Բայց աշխարհը գուցե երկար կյանք չունենա:
Մեկուսացու՛մ...

Հիշիր

Հիշի՛ր երիտասարդությունդ՝
Ինչպես էր հերոսը խուսափում կախվելուց՝
Միշտ փախչելով հեռու:

Հիշի՛ր, թե ինչպես էր մարդը
Քեզ դատարկաձեռն թողնելու միջոցով
Մշտապես հիասթափեցնում քեզ:
Եթե երբևէ միտքդ փոխես՝
Այդ ամենը մատնելու մոռացության,
Հիշի՛ր, հիշիր այսօր:

Մի՛ նեղվիր անցած
Ճանապարհիդ համար,
Մի՛ անհանգստացիր
Արածիդ համար:

Պարզապես հիշի՛ր.
Երբ դու փոքր էիր
Ինչպես էին մարդիկ այդքան բարձրահասակ թվում
Եվ միշտ ունեին իրենց ճանապարհը:
Հիշու՛մ ես մայրիկդ ու հայրիկդ ինչքա՛ն էին ուզում
Քեզ տեսնել միայն կինոաստղ դարձած,
Մշտապես իրենց դերը խաղալով,
Եթե երբևէ դու տխրում էիր
Եվ ամբողջ աշխարհը քեզ խելագարեցնում էր.
Հիշի՛ր, հիշիր այսօր:

Մի՛ նեղվիր անցած
Ճանապարհիդ համար,
Մի՛ անհանգստացիր
Արածիդ համար:
Չէ, չէ, հիշի՛ր, հիշի՛ր
Նոյեմբերի հինգը:

Մեր

Մերն իրական է, իրականը՝ սեր.
Մերը զգացում է, զգացումը՝ սեր.
Մերը ցանկություն է սիրված լինելու:

Մերը հպում է, հպումը՝ սեր.
Մերը նվաճում է, նվաճումը՝ սեր.
Մերը պահանջ է սիրված լինելու:

Մերը դու ես,
Դու և ես.
Մերն իմանալն է, որ կարող ենք լինել:

Մերն ազատ է, ազատը՝ սերը.
Մերն ապրելն է, ապրելը՝ սեր.
Մերը կարիք է սիրված լինելու:

Լավ, լավ, լավ

Ես սիրեցյալիս տարա ընթրիքի,
Որ կարողանանք այնտեղ մի կուշտ ուտել,
Եվ, չնայած երկուսս էլ շատ նիհար էինք,
Նա այնքան սիրուն տեսք ուներ, որ ես նրան էլ կարող էի ուտել:
Լավ, լավ, լավ, շատ լավ...

Նստած խոսում էինք հեղափոխության մասին,
Ճիշտ ինչպես լիբերալներն արևի տակ.
Խոսեցինք նաև կանանց ազատագրման մասին,
Եվ, ինչպես դժոխքում, կարող էինք ամեն ինչ անել:
Լավ, լավ, լավ, շատ լավ...

Ես սիրեցյալիս տարա մի արձակ դաշտ,
Որ կարողանանք տեսնել Անգլիայի երկինքը.
Երկուսս էլ մեզ մեղավոր էինք զգում,
Եվ մեզնից ոչ ոք չգիտեր, թե ինչու:
Լավ, լավ, լավ, շատ լավ...

Աստված

Աստված հիմնադրույթ է՝ օգտվելով որից
Չափում ենք մեր ցավը:
Կրկնեմ նորից.
Աստված հիմնադրույթ է՝ օգտվելով որից
Չափում ենք մեր ցավը:

Ես չեմ հավատում մոգությանը,
չեմ հավատում Ի-Ցզիսին,
չեմ հավատում Աստվածաշնչին,
չեմ հավատում Տարոյին,
չեմ հավատում Հիտլերին,
չեմ հավատում Հիտուսին,
չեմ հավատում Քենեդիին,
չեմ հավատում Բուրդային,
չեմ հավատում մանտրային,
չեմ հավատում Գիտային,
չեմ հավատում յոգային,
չեմ հավատում արքաներին,
չեմ հավատում Էլվիսին,
չեմ հավատում Ջիմերմանին,
չեմ հավատում Բիթլզ-ին,

Հավատում եմ միայն ինձ՝ Յոկոյին և ինձ,
Եվ սա է իրականությունը:

Երազն ավարտված է,

Ի՞նչ ասեմ...

Երազն ավարտվեց

Երեկ:

Ես երազող էի,

Բայց հիմա վերածվել եմ

Ծովագուլի:

Հիմա ես Ջոնն եմ,

Եվ ուրեմն, սիրելի՛ ընկերներ,

Պարզապես շարունակե՛ք ձեր գործը:

Երազն ավարտված է...

Մորս մահը

Մորս մահը

Չեմ կարող գլխիցս հանել,

Չնայած այսքան տարի է անցել

Մորս մահից:

Չեմ կարող բացատրել

Այսքան մեծ ցավս,

Երբեք չեմ կարող նկարագրել

Մորս մահը...

ՊԱՏԿԵՐԱՑՐԵՔ (1971)

Պատկերացրեք...

Պատկերացրեք, որ դրախտ չկա
(Հեշտ է դա անել, եթե փորձեք).
Մեր ներքևում դժոխք չկա.
Մեր վերևում միայն երկինքն է.
Պատկերացրեք, որ բոլոր մարդիկ
Ապրում են այսօրվա օրով:

Պատկերացրեք, որ երկրներ չկան
(Դժվար չէ դա անել).
Մպանելու կամ մեռնելու պատճառ չկա,
Եվ նաև չկա ոչ մի կրոն.
Պատկերացրեք, որ բոլոր մարդիկ
Ապրում են խաղաղ կյանքով:

Դուք կարող եք ասել, որ ես երագող եմ,
Բայց ես միակը չեմ.
Հուսով եմ, որ մի օր դուք կմիանաք մեզ,
Եվ աշխարհը կլինի ավելի միասնական:

Պատկերացրեք, որ ունեցվածք չկա
(Կզարմանամ, եթե կարողանաք դա անել).
Ազգախոթյան կամ սովի պատճառ չկա.
Մարդիկ վարվում են իրար հետ եղբայրաբար,
Եվ պատկերացրեք, որ ողջ աշխարհը
Պատկանում է անխտիր բոլոր մարդկանց:

Դուք կարող եք ասել, որ ես երագող եմ,
Բայց ես միակը չեմ.
Հուսով եմ, որ մի օր դուք կմիանաք մեզ,
Եվ աշխարհը կապրի միասնաբար:

Ներքուստ հաշմված

Դուք կարող եք փայլեցնել ձեր կոշիկները և հագնել ընտիր կոստյում,
Դուք կարող եք սանրել ձեր մազերը և կարգին գեղեցկանալ,
Դուք կարող եք ծածկել ձեր դեմքը ժպիտով,
Բայց չեք ծածկի մի բան՝
Այն, որ ներքուստ հաշմված եք:

Դուք կարող եք դիմակ կրել և ներկել ձեր դեմքը,
Դուք կարող եք ինքներդ ձեզ անվանել ընտիր մարդկային ցեղ,
Դուք կարող եք կրել փայլուն օձիք ու փողկապ,
Բայց դրանցով չեք ծածկի մի բան՝
Այն, որ ներքուստ հաշմված եք:

Լավ, ասենք թե գիտես, որ քո կատուն ինը կյանք ունի, ջանի՛կս,
Ինը կյանքն էլ անցնում են ինքնաբերաբար,
Բայց դու ստացել ես միայն մեկը,
Եվ շան կյանքն այնքան էլ զվարճալի բան չէ.

- Վայ մամա ջան, հապա նայիր դուրս...

Դուք կարող եք գնալ եկեղեցի և օրհներգ երգել,
Դուք կարող եք ինձ դատել մաշկիս գույնի պատճառով,
Դուք կարող եք մինչ ի մահ ստի մեջ ապրել,
Բայց չեք ծածկի մի բան՝
Այն, որ ներքուստ հաշմված եք:

- Սա էլ քեզ, զարմի՛կս...

Լավ, ասենք թե գիտես, որ քո կատուն ինը կյանք ունի, ջանի՛կս,
Ինը կյանքն էլ անցնում են ինքնաբերաբար,
Բայց դու ստացել ես միայն մեկը,

Եվ շան կյանքն այնքան էլ զվարճալի բան չէ.

- Վայ մամա ջան, հապա նայիր դուրս...

Դուք կարող եք գնալ եկեղեցի և օրհներգ երգել,

Դատել ինձ մաշկիս գույնի պատճառով,

Դուք կարող եք մինչ ի մահ ստի մեջ ապրել,

Բայց չեք ծածկի մի բան՝

Այն, որ ներքուստ հաշմված եք:

Բայց չեք ծածկի մի բան՝

Այն, որ ներքուստ հաշմված եք:

Բայց չեք ծածկի մի բան՝

Այն, որ ներքուստ հաշմված եք:

Այնքա՛ն դժվար է...

Դու պետք է ապրես.

Դու պետք է սիրես.

Դու պետք է ինչ-որ մեկը լինես.

Դու պետք է մեկին տեղը դնես...

Բայց այնքա՛ն դժվար է,

Իրոք այնքա՛ն դժվար է,

Որ երբեմն ուզում եմ գետնի տակն անցնել:

Դու պետք է ուտես.

Դու պետք է խմես.

Պետք է ինչ-որ բան զգաս.

Պետք է անհանգստանաս...

Բայց այնքա՛ն դժվար է,

Իրոք այնքա՛ն դժվար է,

Որ երբեմն ուզում եմ գետնի տակն անցնել:

Բայց երբ դա լավ է՝

Իսկապէս լավ է.
Իսկ երբ քեզ պահում եմ գրկիս մեջ, ջանի՛կս,
Երբեմն ուզում եմ գետնի տակն անցնել:

Դու պետք է վազես.
Դու պետք է թաքնվես.
Դու պետք է գոհացնես կնոջդ...
Բայց այնքա՛ն դժվար է,
Իրոք այնքա՛ն դժվար է,
Որ երբեմն ուզում եմ գետնի տակն անցնել:

Խանդոտի մեկը

Երազն ինձ տարավ անցյալ,
Սրտիս զարկերն արագացան.
Ես սկսեցի ինձ կորցնել,
Ես սկսեցի ինձ կորցնել.
Մտքիս չկար վիրավորել,
Ների՛ր, որ քեզ լացացրի.
Օ՛հ, վիրավորել չէի ուզում,
Խանդոտի մեկն եմ պարզապէս:

Ինձ համակեց կասկածը,
Թե ինձ էլ չես սիրելու.
Ներսս մի դող սողոսկեց...
Ներսս մի դող սողոսկեց...
Օ՛հ, մտքիս չկար վիրավորել,
Ների՛ր, որ քեզ լացացրի.
Օ՛հ, վիրավորել չէի ուզում,
Խանդոտի մեկն եմ պարզապէս:

[մեղեդի]

Մտքիս չկար վիրավորել,
Ների՛ր, որ քեզ լացացրի...
Օ՛հ, վիրավորել չէի ուզում,
Խանդոտի մեկն եմ պարզապես:

Փորձեցի որսալ հայացքդ,
Կարծելով, թե փախցնում ես.
Խլացրի ցավն իմ ներսում,
Խլացրի ցավն իմ ներսում.
Մտքիս չկար վիրավորել,
Ների՛ր, որ քեզ լացացրի...
Օ՛հ, վիրավորել չէի ուզում,
Խանդոտի մեկն եմ պարզապես:
Ուշք դարձրու, ջա՛նս,
Խանդոտի մեկն եմ, պարզ է.
Լավ նայիր, ջա՛նս,
Խանդոտի մեկն եմ պարզապես:

Տվե՛ք ինձ մի քիչ ճշմարտություն

Ես հոգնել եմ անհեթեթ բաներ լսել
Հեղհեղուկ, չնչին, նեղմիտ կեղծավորներից.
Իմ ուզածը սոսկ ճշմարտությունն է,
Տվե՛ք ինձ գեթ մի քիչ ճշմարտություն:

Ես հագեցել եմ անհեթեթ բաներ կարդալով
Էս գիժ նկրտիկների, էս խոզի մռութ քաղաքական գործիչների
խզրզանքներում:

Իմ ուզածը սոսկ ճշմարտությունն է,
Տվե՛ք ինձ գեթ մի քիչ ճշմարտություն:

Ահա կարճ խուզած մազերով, ուռած-դեղնած փորով
Ճարպիկ խաբեբայի մի զավակ
Քծնում է ինձ
Ձեռքերը պահած գրպաններում,
Որոնցում լոկ լպրծուն օճառ է՝
փող դոպի համար,
Փող թոկի համար

Ես մահու չափ հոգնել եմ այս ամենից՝
Նայելով պնդաճակատ, մամայի բալիկ շովինիստներին.
Իմ ուզածը սուկ ճշմարտությունն է,
Տվե՛ք ինձ գեթ մի քիչ ճշմարտություն:

Ես բավականաչափ դեմքեր եմ տեսել
Շիզոֆրենիկների, եսակենտրոն պարանոիդների, պրիմադոննաների:

Իմ ուզածը սուկ ճշմարտությունն է հիմա,
Տվե՛ք ինձ գեթ մի քիչ ճշմարտություն հիմա:

Ա՛խ, իմ սեր

Ա՛խ, իմ սեր, կյանքումս առաջին անգամ
Աչքերս լայն բաց են.
Ա՛խ, սիրելիս, կյանքումս առաջին անգամ
Աչքերս կարող են տեսնել:

Ես տեսնում եմ քամին, ա՛խ, տեսնում եմ ծառերը,
Իմ սրտում զուլալ է ամեն ինչ.
Ես տեսնում եմ ամպերը, ա՛խ, տեսնում եմ երկինքը
Մեր աշխարհում զուլալ է ամեն ինչ:

Ա՛խ, իմ սեր, կյանքումս առաջին անգամ
Իմ միտքը լայն բաց է.

Ա՛խ, սիրելիս, կյանքումս առաջին անգամ
Իմ միտքը կարող է զգալ:

Ես վիշտ եմ ապրում, ա՛խ, ապրում եմ երազներով,
Իմ սրտում զուլալ է ամեն ինչ.
Ես զգում եմ կյանքը, ա՛խ, զգում եմ սեր,
Մեր աշխարհում զուլալ է ամեն ինչ:

Ինչպե՞ս է քուն գալիս աչքերիդ...

Այսպիսով, «Մերժանտ Պղպեղը» քեզ անակնկալի բերեց
Լավ կլինե՞ր տեսած լինե՞իր մորական աչքերով
Այն հրեշները ճիշտ էին ասում, թե մեռած ես
Մի սխալ ես թույլ տվել, որ հենց քո գլխում էր
Ինչպե՞ս է քուն գալիս աչքերիդ...
Ա՛խ, ինչպե՞ս է գիշերով քուն գալիս աչքերիդ:

Ապրում ես համակիրներիդ հետ, ովքեր քեզ «արքա» են կոչում,
Դե, թո՛հ՛ր, երբ մայրդ քեզ ինչ-որ բան կասի.
Միակ արածդ «Երեկն» էր
Եվ, քանի որ հեռացել ես, ապա օրդ փոխվել է
Ինչպե՞ս է քուն գալիս աչքերիդ...
Ա՛խ, ինչպե՞ս է գիշերով քուն գալիս աչքերիդ:

Գեղեցիկ դեմք կունենաս մեկ կամ երկու տարի,
Բայց շուտով նրանք կտեսնեն, թե ինչի ես ունակ.
Քո հնչեցրած ձայնը մուգակ է ականջիս մեջ.
Պետք է գուն՞ մի բան սովորած լինե՞իր անցած տարիներին.
Ինչպե՞ս է քուն գալիս աչքերիդ...
Ա՛խ, ինչպե՞ս է գիշերով քուն գալիս աչքերիդ:

Ինչպե՞ս...

Ինչպե՞ս կարող եմ առաջ գնալ, երբ չգիտեմ, թե հայացքս ուր է ուղղված:
Ինչպե՞ս կարող եմ առաջ գնալ, երբ չգիտեմ, թե որ կողմը թեքվեմ:
Ինչպե՞ս կարող եմ առաջ գնալ մի բանում, որում վստահ չեմ:
Օ , ոչ, օ , ոչ...

Ինչպե՞ս կարող եմ զգացում ունենալ, երբ չգիտեմ՝ արդյո՞ք դա զգացում է:
Ինչպե՞ս կարող եմ ինչ-որ բան զգալ, եթե գոնե չգիտեմ, թե ինչպե՞ս զգալ:
Ինչպե՞ս կարող եմ զգացմունքներ ունենալ,
եթե զգացմունքներս միշտ մերժվել են:
Օ , ոչ, օ , ոչ...

Գիտե՞ք, որ կյանքը կարող է երկար տևել,
Եվ դուք պետք է լինե՞ք այնքա՞ն ուժեղ.
Բայց աշխարհն այնքա՞ն դաժան է.
Երբեմն ես զգում եմ, որ էլ բավական է...

Ինչպե՞ս կարող եմ սեր տալ, երբ չգիտեմ, թե ինչ եմ տալիս:
Ինչպե՞ս կարող եմ սեր տալ, երբ գոնե չգիտեմ, թե ինչպե՞ս տալ:
Ինչպե՞ս կարող եմ սեր տալ, եթե սերը մի բան է, որից երբեք չեմ ունեցել:
Օ , ոչ, օ , ոչ...

Գիտե՞ք, որ կյանքը կարող է երկար տևել,
Եվ դուք պետք է լինե՞ք այնքա՞ն ուժեղ
Բայց աշխարհն այնքա՞ն դաժան է.
Երբեմն ես զգում եմ, որ էլ բավական է...

Ինչպե՞ս կարող ենք առաջ գնալ, երբ չգիտենք, թե դեպի՞ ուր ենք նայում:
Ինչպե՞ս կարող ենք առաջ գնալ, երբ չգիտենք, թե որ կողմը թեքվենք:
Ինչպե՞ս կարող ենք առաջ գնալ մի բանում, որում վստահ չենք:
Օ , ոչ, օ , ոչ...

Ա՛խ, Յոկո

Գիշերվա կեսին

Գիշերվա կեսին քո անունն եմ տալիս

Ա՛խ, Յոկո, ա՛խ, Յոկո, իմ սերը քեզ հետ կբերի

Լոգանքիս կեսին

Լոգանքիս կեսին քո անունն եմ տալիս

Ա՛խ, Յոկո, ա՛խ, Յոկո, իմ սերը քեզ հետ կբերի

Իմ սերը քեզ հետ կբերի

Մափրվելուս կեսին

Մափրվելուս կեսին քո անունն եմ տալիս

Ա՛խ, Յոկո, ա՛խ, Յոկո, իմ սերը քեզ հետ կբերի

Երազիս կեսին

Երազի կեսին քո անունն եմ տալիս

Ա՛խ Յոկո, ա՛խ, Յոկո, իմ սերը քեզ հետ կբերի

Իմ սերը քեզ հետ կբերի

Ամպի մեջտեղում

Ամպի մեջտեղում քո անունն եմ տալիս

Ա՛խ Յոկո, ա՛խ, Յոկո, իմ սերը քեզ հետ կբերի

Իմ սերը քեզ հետ կբերի

Ա՛խ Յոկո, ա՛խ, Յոկո,

Ա՛խ Յոկո, ա՛խ, Յոկո...

Որոշ ժամանակ Նյու-Յորք քաղաքում (1972)

Կինն աշխարհի նեզրն է

Կինն աշխարհի նեզրն է,
Այո՛, այդպես է. մտածե՛ք այս մասին:
Կինն աշխարհի նեզրն է.
Մտածե՛ք այս մասին, մի բան արե՛ք դրա դեմ:

Մենք ստիպում ենք նրան, որ դեմքը շպարի ու պարի.
Եթե չի ուզում ստրուկ լինել, հանդիմանում ենք, թե մեզ չի սիրում.
Եթե անբռնազբոս է, հանդիմանում ենք, թե փորձում է տղամարդ երևալ.
Նսեմացնում ենք նրան, ապա ձևացնում, թե մեզնից վեր ենք դասում:
Կինն աշխարհի նեզրն է,
Այո՛, այդպես է. եթե ինձ չեք հավատում, նայեք ձեր կողակցին:
Կինը ստրուկների ստրուկն է,
Ա՛խ, այո՛, ավելի բարձր գոչեք այս մասին:

Մենք նրան վարժեցնում ենք արջի պես, որ մեծացնի մեր երեխաներին,
Հետո նրան տեղ ենք հատկացնում տան մեջ, որպես գեր ու ծեր թխսկանի.
Ասում ենք, որ տունը միակ տեղն է, որտեղ նա պետք է միշտ լինի,
Հետո տրտնջում ենք, թե նա չափազանց աննշան է, որ մեզ ընկերակցի:
Կինն աշխարհի նեզրն է,
Այո՛, այդպես է. եթե ինձ չեք հավատում, նայեք ձեր կողակցին:
Կինը ստրուկների ստրուկն է,
Այո՛, մտածե՛ք այս մասին:

Հեռատեսիլով ամեն օր վիրավորում ենք նրան,
Ապա զարմանում, թե ինչու քաջ չէ կամ ինքնավստահ:
Երբ նա ջահել է դեռ, մենք սպանում ենք նրա ազատ լինելու կամքը.
Ասում ենք՝ այդքան խելացի մի լինի, հետո մեղադրում, որ այդքան համր
է:
Կինն աշխարհի նեզրն է,
Այո, այդպես է. եթե ինձ չեք հավատում, նայեք ձեր կողակցին:

Կինը ստրուկների ստրուկն է,
Այո՛, այդպես է. եթե հավատում եք ինձ՝ ավելի բարձր գոչեք այս մասին:

[Կրկն.] Մենք ստիպում ենք նրան, որ դեմքը շպարի ու պարի...

Ատտիկա Նահանգ

Մարդկային ուժերի ինչպիսի՛ վատնում...
Ինչպիսի՛ վատնում մարդկային կյանքերի...
Կրակեցին բանտարկյալների վրա աշտարակներում,
Ստացանք քառասուններեք աղքատ այրի կանայք...

Ատտիկա նահանգ, Ատտիկա նահանգ,
Մենք բոլորս Ատտիկա նահանգի հետ ենք:

Լրատվամիջոցները մեղադրում են բանտարկյալներին
Բայց բանտարկյալները չեն սպանել,
Դա «Ռոքֆելլերը սեղմեց ձգանը»,
Եվ ժողովուրդը զգում է դա:

Ատտիկա նահանգ, Ատտիկա նահանգ,
Մենք բոլորս Ատտիկա նահանգի հետ ենք:

Ազատեք բանտարկյալներին, բանտարկեք դատավորներին.
Ազատեք բոլոր բանտարկյալներին ամենուր.
Նրանք միայն ճշմարտություն ու արդարություն են ուզում,
Նրանց միայն սեր և հոգատարություն է պետք:

Ատտիկա նահանգ, Ատտիկա նահանգ,
Մենք բոլորս Ատտիկա նահանգի հետ ենք:

Նրանք բոլորն արդեն շնչահեղձ են լինում.
Եկեք չտեսնենք նրանց վշտից մեռած.

Հեղափոխության ժամանակն է հիմա,
Տա՛նք նրանց բոլորին ոտքի կանգնելու շանս:

Ատտիկա նահանգ, Ատտիկա նահանգ,
Մենք բոլորս Ատտիկա նահանգի հետ ենք:

Համեցե՛ք, միացե՛ք շարժմանը,
Մարդու իրավունքների պաշտպանությամբ հանդես եկեք.
Վախն ու ատելությունը մթազնում են մեր մտքերը,
Ազատե՛նք մեզ բոլորիս անվերջանալի խավարից:

Ատտիկա նահանգ, Ատտիկա նահանգ,
Մենք բոլորս Ատտիկա նահանգի հետ ենք,
Ատտիկա նահանգ, Ատտիկա նահանգ,
Մենք բոլորս ապրում ենք Ատտիկա նահանգում
Ատտիկա նահանգ, Ատտիկա նահանգ,
Ատտիկա, Ատտիկա, Ատտիկա նահանգ...

Բանտում ծնվածները

Մենք ծնվել ենք բանտում,
մեծացել ենք բանտում,
ուղարկվել ենք մի բանտ, որը կոչվում է դպրոց,

Մենք լացում ենք բանտում,
մենք սիրում ենք բանտում,
մենք ապրում ենք բանտում,
հիմարների նման:

Փայտը դառնում է ֆլեյտա,
երբ սիրված է լինում.
հոգացե՛ք ինքներդ ձեր
և ձեզ նման ծեծվածների համար:

Հայելին դառնում է ածելի,
երբ կոտրվում է.
նայեք հայելու մեջ և տեսեք
ձեր փշրված ճակատագրերը:

Մենք ապրում ենք անօգուտ,
շփվում ենք անօգուտ,
դեն ենք նետվում անօգուտ
գործիքների նման:

Աշխատում ենք բանտում,
վաստակում ատելություն,
և մեռնում բանտում
որպես կանոն:

Մենք ապրում ենք բանտում
դատավորների և խնամակալների հսկողությամբ
և անօգուտ սպասում օգտակար լինելու:
Մենք ծիծաղում ենք բանտում,
անցնում բոլոր չորս եղանակների միջով
և մեռնում՝ զրկված տեսողությունից
կամ ճշմարտությունից:

Կիրակի, արյունոտ կիրակի

Եվ այսպես, կիրակի, արյունոտ կիրակի էր
Երբ այնտեղ կրակեցին մարդկանց վրա
Տասներեք նահատակների աղաղակները
Լցրեցին ազատ Դերիի օդը
Ձեր մեջ որևէ մեկը կա՞
Որ համարձակվի դրա մեղքը բարդել երեխաների վրա
Ոչ մի զինվոր տղայի արյուն չէր հոսում
Երբ մեխում էին դագաղների կափարիչները:

Կիրակի, արյունոտ կիրակի
Արյունոտ կիրակի օր...

Դուք պնդում եք, թե մեծամասնությունն էք
Եվ ինքներդ գիտեք, որ դա սուտ է
Իրականում փոքրամասնությունն էք
Այս քաղցր էմերալդ կղզում
Երբ Սթորմոնթն արգելում է մեր երթը
Նրանք սովորելու շատ բան ունեն
Ինտերնավորումը հիմնավորում չէ
Այրվելու հերթը այդ մայրերինն է:

Կիրակի, արյունոտ կիրակի
Արյունոտ կիրակի օր...
Կիրակի, արյունոտ կիրակի
Արյունոտ կիրակի օր...

Դուք անգլո խոզեր և շոտլանդացիներ
Ուղարկեցիք գաղութացնելու հյուսիսը
Թափահարում եք ձեր արյունոտ Union Jacks-ը
Եվ գիտեք, թե ինչ արժե այն:
Ինչպե՞ս էք համարձակվում պատանդ պահել
Հպարտ ու ազատ մի ժողովրդի
Թողեք Իռլանդիան իռլանդացիներին
Անգլիացիներդ վերադարձեք ծով:

Կիրակի, արյունոտ կիրակի
Արյունոտ կիրակի օր...
Կիրակի, արյունոտ կիրակի
Արյունոտ կիրակի օր...

Դե, միշտ էլ արյունոտ կիրակի է լինում
Համակենտրոնացման ճամբարներում
Ազատե՛ք Ջրվեժներն ու ճանապարհներն ընդմիջտ

Անգլիական արյունոտ ձեռքերից
Հայրենադարձվե՛ք Բրիտանիա
Բոլորդ, ովքեր այն անվանում են տուն
Իռլանդիան թողեք իռլանդացիներին
Եվ ոչ Լոնդոնին կամ թե Հոումին:

Կիրակի, արյունոտ կիրակի
Արյունոտ կիրակի օր...
Կիրակի, արյունոտ կիրակի
Արյունոտ կիրակի օր...

...

Մենք նույն ջրից ենք

Գուցե առանձնապես տարբերություն չգտնենք
Նախագահ Մաոյի և Ռիչարդ Նիքսոնի միջև,
Եթե մերկացնենք նրանց:

Գուցե առանձնապես տարբերություն չգտնենք
Մերիլին Մոնրոյի և Լենի Բրյուսի միջև,
Եթե բացենք նրանց դագաղները:

Գուցե առանձնապես տարբերություն չգտնենք
Սպիտակ Տան և Ժողովրդի Սրահի միջև,
Եթե հաշվենք պատուհանները:

Գուցե առանձնապես տարբերություն չգտնենք
Ռաքել Ուելչի և Ջերի Ռուբինի միջև,
Եթե լսենք նրանց սրտի բաբախյունը:

Մենք նույն ջրից ենք, թեև տարբեր են գետերը,
Ահա թե ինչու շատ հեշտ է հանդիպել.
Մենք նույն ջրից ենք այս հսկա, հսկա օվկիանոսում,

Եվ մի օր էլ միասին կգոլորշիանանք:

Գուցե առանձնապես տարբերություն չգտնենք
Էլդրիջ Քլիվերի և Անգլիայի թագուհու միջև,
Եթե շշալցնենք նրանց արցունքները:

Գուցե առանձնապես տարբերություն չգտնենք
Մենսոնի և Պապի միջև,
Եթե զսպենք նրանց ժպիտները:

Գուցե առանձնապես տարբերություն չգտնենք
Ռոքֆելլերի և քո միջև,
Եթե իմանանք, որ երգում ես:

Գուցե առանձնապես տարբերություն չգտնենք
Իմ և քո միջև,
Եթե ի ցույց դնենք մեր երազանքները:

Մենք նույն ջրից ենք, թեև տարբեր են գետերը,
Ահա թե ինչու շատ հեշտ է հանդիպել.
Մենք նույն ջրից ենք այս հսկա, հսկա օվկիանոսում,
Եվ մի օր էլ միասին կգոլորշիանանք:

Հե՛յ, տարբերություն չկա...
Ո՞րն է տարբերությունը... Ո՞րն է տարբերությունը...
Ու՞ր է, ու՞ր է...
Տարբերություն չկա... Տարբերություն չկա...
Ո՞րն է տարբերությունը...

ՄՏԱՎԱՐԺԱՆՔՆԵՐ

(1973)

Մտավարժանքներ

Մենք իրար հետ զբաղված ենք այս մտավարժանքներով.
Պատնեշներ ենք քանդում, սերմեր ցանում,
Ձևանում ենք մտքի պարտիզաններ,
Մրմնջում մանտրա՝ խաղաղություն երկրին:

Մենք բոլորս զբաղված ենք մտավարժանքներով.
Որոշ դրուիդ տղերք էլ բարձրացնում են վարագույրը
Իրենց մտքի պարտիզանության,
Ոմանք էլ դա անվանում են մոգություն՝ գրահալի որոնում:
Պատասխանը Մերն է, դուք դա հաստատ գիտեք.
Մերը ծաղիկ է, և դուք պետք է թույլ տաք,
Դուք պետք է թույլ տաք, որ այն աճի:
Դե, շարունակե՛ք իրար հետ զբաղվել մտավարժանքներով՝
Հավատ ապագայի հանդեպ, ներկայից դուրս...
Դուք պարզապես չեք կարող հաղթել
Մտքի այդ պարտիզաններին.
Դա արեք մի այլ տեղ՝ ձեր մտքի ժայռերում:
Այո, զբաղված ենք ընդմիջտ մտավարժանքներով
Եվ մեր մտապատկերներն ենք ամրագրում
Տարածության և ժամանակի մեջ:

Այո՛ն է պատասխանը, և դուք դա հաստատ գիտեք
Այոն հանձնվելն է, և դուք պետք է թույլ տաք,
Դուք պետք է թույլ տաք, որ դա լինի...

Դե, շարունակե՛ք իրար հետ զբաղվել մտավարժանքներով.
Ծիսական պա՛ր պարեք արևի տակ,
Միլիոնավոր մտքի պարտիզաննե՛ր,
Պտտե՛ք կարմայի անիվը ձեր հոգու ուժով
Շարունակե՛ք ընդմիջտ զբաղվել այդ մտավարժանքներով

Եվ բարձրացրե՛ք խաղաղության և սիրո ոգին:

Մեր...

(Ես ուզում եմ, որ դուք սիրով զբաղվեք, ոչ թե պատերազմով,
Գիտեմ, որ նախկինում լսել եք այդ մասին...)

Aisumasen (Ներիք ինձ)

Երբ ես սուզվում եմ իսկապես ին-ում
Եվ չեմ իմանում, թե ինչ եմ անում,
Ների՛ր ինձ, ների՛ր ինձ, Յոկո...
Ինձ մնում է սուկ քո անունը տալ,
Ինձ մնում է սուկ քո անունը տալ:

Եթե կոպտել եմ ու ցավ պատճառել,
Միրելիս, խոստանում եմ, որ էլ չեմ անի:

Ների՛ր ինձ, ների՛ր ինձ, Յոկո,
Շատ դժվար է, գիտեմ, միայն սեփական ցավն զգալը
Շատ դժվար է, գիտեմ, միայն սեփական ցավն զգալը

Ես գիտեմ սուկ այն, ինչ ինձ հայտնում ես,
Ես գիտեմ սուկ այն, ինչ ցույց ես տալիս:

Երբ սուզված եմ իրական սանպակու-ում
Եվ չեմ իմանում, թե ինչ անեմ,
Ների՛ր ինձ, ների՛ր ինձ, Յոկո սան...
Ինձ մնում է սուկ քո անունը տալ,
Այո՛, ինձ մնում է սուկ քո անունը տալ:

Ժամանակի մի օրը

Դու իմ թուլությունն ես, դու նաև իմ ուժն ես.
Ավելի մեծ իմաստ աշխարհում չեմ փնտրում,
Քանզի ես ձուկ եմ, իսկ դու՝ ծով:
Երբ մենք միասին ենք կամ իրարից հեռու,
Մեր սրտերի զարկերը միշտ իրար մոտ են հնչում,
Քանզի ես խնձոր եմ, իսկ դու՝ ծառ:

Ժամանակի մի օրն է մեր ողջ անելիքը,
Ժամանակի մի օրը բարի է քեզ համար,

Քանզի դու իմ կինն ես, ես՝ քո ամուսինը.
Ավելի կարևոր ոչինչ չկա, հիմա հասկացա,
Որ դուռ եմ ես, իսկ դու՝ բանալի:
Առավոտյան արթնանում և քո ժպիտն եմ տեսնում
Զգում եմ շունչդ դեմքիս և սեր քո աչքերում
Քանզի դու մեղր ես, իսկ ես՝ մեղու:

Ժամանակի մի օրն է մեր ողջ անելիքը,
Ժամանակի մի օրը բարի է քեզ համար,

Քանզի ես ձուկ եմ, իսկ դու՝ ծով,
Քանզի ես խնձոր եմ, իսկ դու՝ ծառ,
Քանզի ես դուռ եմ, իսկ դու՝ բանալի,
Քանզի դու մեղր ես, իսկ ես՝ մեղու:

Ինտուիցիա

Մտադրություններս բարի են ինտուիցիայիս շնորհիվ.
Այն ինձ տանում է իր հետևից:
Մինչդեռ ինձ անհասկանալի է
Այլոց սնահավատությունը,

Որը նման է ինքնասպանության:
Եվ կյանքիս խաղը խաղալուս ընթացքում
Փորձում եմ բարելավել դրա ամեն օրը,
Իսկ երբ պայքարում եմ գիշերվա խավարի դեմ,
Երաժշտության դյուրանքն է կարծես
Լուսավորում ուղիս:
Ինտուիցիաս է ինձ տանում այնտեղ,
Ինտուիցիաս է ինձ տանում ամենուր:

Իմ բնագդները հրաշալի են գործում.
Ես սովորել եմ դրանք օգտագործել,
Որպեսզի գոյատևեմ
Եվ մերթ ընդ մերթ փարատեմ այն հին կասկածը,
Որ ողջ լինելը լավ բան է:
Եվ երբ սուզվում եմ ցած, ինքնամեկուսանում,
Եվ այլևս ասելիք չի մնում,
Այնժամ հասկանում եմ, որ դա սուկ պայման է
Իրերը հենց այդպես տեսնելու համար.
Ինտուիցիաս է ինձ տանում այնտեղ,
Ինտուիցիաս է ինձ տանում ամենուր:

Կապույտից ճայթելով

Կապույտից ճայթելով դու եկար ինձ մոտ,
Եվ հեռու քեցիք կյանքիս հոգսերը,
Կապույտից ճայթած կյանքի էներգիա,
Կապույտից ճայթելով դու եկար ինձ մոտ:

Ամեն օր շնորհակալ եմ լինում Տիրոջն ու Տիկնոջը,
Քեզ ինձ մոտ բերող ճանապարհի համար.
Մեկ է, պետք է դառնայինք երկու միտք, մեկ ճակատագիր:

Կապույտից ճայթելով դու եկար ինձ մոտ,

Եվ հեռու քշեցիր կյանքիս հոգսերը,
Կապույտից ճայթած կյանքի էներգիա,
Կապույտից ճայթելով դու եկար ինձ մոտ:

Ամբողջ կյանքս անցավ սպասման տանջանքով,
Այնինչ ծնվել էի միայն քեզ հասնելու համար,
Մեկ է, ողջ կմնայի այնքան, որ քեզ կինս դարձնեմ:

Կապույտից ճայթելով դու եկար ինձ մոտ,
Եվ հեռու քշեցիր կյանքիս հոգսերը,
Կապույտից ճայթած կյանքի էներգիա,
Կապույտից ճայթելով դու եկար ինձ մոտ:

ՉԹՕ-ի նման դու դու եկար ինձ մոտ,
Եվ հեռու քշեցիր կյանքիս հոգսերը,
Կապույտից ճայթած կյանքի էներգիա,
Կապույտից ճայթելով դու եկար ինձ մոտ:

Միայն մարդիկ

Գնացի՛նք...

Միայն մարդիկ գիտեն, թե ինչպես խոսեն իրար հետ.
Միայն մարդիկ գիտեն, թե ինչպես փոխեն աշխարհը.
Միայն մարդիկ են գիտակցում իրենց ուժը.
Միլիոն գլուխն ավելի լավ է, քան մեկը,
Դե, ուրեմն առա՛ջ, գնացինք հաղթելու:

Իհարկե, գիտեմ, թե ինչպես ենք հաճախ փորձել
Լաց լինել և առատ արցունքներ թափել.
Այժմ մենք ավելի բարձր ենք, անցել ենք երկար ճանապարհ,
Եվ մեզ այլևս հնարավոր չէ խաբել:
Կին թե տղամարդ կողք-կողքի իրար հետ
Եկե՛ք չսխալվեք, կերտենք մեր ապագան.
Մեր թխած տորթը պետք է նաև ուտենք,

Մենք չենք ուզում դառնալ անասնաֆերմա:

Միայն մարդիկ գիտեն, թե ինչպես խոսեն իրար հետ.
Միայն մարդիկ գիտեն, թե ինչպես փոխել աշխարհը.
Միայն մարդիկ են գիտակցում իրենց ուժը.
Միլիոն գլուխն ավելի լավ է, քան մեկը,
Ուրեմն առաջ, գնացինք հաղթելու:

Այո՛, դեռ մի բան էլ ուշացել ենք.
Ավելի լավ բան չունենք անելու.
Այժմ մենք ավելի բարձր ենք, մենք անցել ենք երկար ճանապարհ.
Մենք կարող ենք թռչել ինչի միջով ասես.
Երկրի վրա չկա ոչինչ, որ մենք չկարողանանք անել.
Չուկ թե կորսված խայծ՝ մեր ապագան է,
Ուրեմն, եկեք միասին քաշենք կարթի պարանը.
Մենք չենք ուզում լինել անասնաֆերմա:

Միայն մարդիկ գիտեն, թե ինչպես խոսեն իրար հետ.
Միայն մարդիկ գիտեն, թե ինչպես փոխեն աշխարհը.
Միայն մարդիկ գիտեն, թե ինչպես խոսեն իրար հետ.
Միայն մարդիկ գիտեն, թե ինչպես փոխեն աշխարհը:

Դու այստեղ ես...

Լիվերպուլից Տոկիո՝
Որքա՛ն երկար ճամփա...
Հեռավոր երկրներից մի կին, մի տղամարդ՝
Չորս քամու բերան ընկած...

Երեք հազար մղոն՝ օվկիանոսի վրայով,
Երեք հազար լուսատարի՝ ծագող արևի երկրից:

Մերը բացեց աչքերս,
Մերն ուղիղ միջովս անցավ.

Ուր էլ որ լինես, այստեղ ես...

Ուր էլ որ լինես, այստեղ ես...

Երեք հազար մղոն՝ օվկիանոսի վրայով,

Երեք հազար լուսատարի՝ զարմանահրաշ երկրից:

Դե, հիմա արևելքն արևելք է, արևմուտքն՝ արևմուտք.

Կհանդիպե՞ն իրար...

Արևելքը արևմուտք է, արևմուտքն՝ արևելք.

Թող լինեն ամբողջական:

Երեք հազար մղոն՝ օվկիանոսի վրայով,

Երեք հազար լուսատարի՝ լուսաստղի երկրից:

Ես գիտեմ

Տարիներն այնքան արագ անցան...

Ես ընդամենը մի բան հասկացա՝

Դեռ նոր եմ սովորում

Ծառը փայտից տարբերել:

Ես գիտեմ, թե ինչն է ցած իջնում

Եվ գիտեմ, թե որտեղից է դուրս գալիս

Եվ ես գիտեմ և ինձ կներեք (այո, ինձ)

Որ երբևէ չեմ կարողանա միտքս արտահայտել

Եվ ես գիտեմ, թե ինչպես ես դու զգում

Եվ ես հիմա գիտեմ, թե ինչ եմ արել

Եվ ես գիտեմ ու մեղավոր եմ

Որ երբևէ չեմ կարողանա միտքս արտահայտել

Ես գիտեմ, թե ինչ եմ կորցրել

Բայց հիմա աչքերս տեսնում են

Ես ինձ քո տեղը դրեցի

Ինչպես դու արեցիր ինձ համար

Այսօր ես քեզ ավելի շատ եմ սիրում, քան երեկ
Հենց հիմա ես քեզ ավելի շատ եմ սիրում, հենց հիմա

Հիմա ես գիտեմ, թե ինչ է իջնում
Ես կարող եմ զգալ, թե որտեղից է այն գալիս
Եվ ես գիտեմ, որ դա անընդհատ լավի կողմն է գնում,
Ինչպես կիսում ենք մեր մտքերն իրար մեջ

Այսօր ես քեզ ավելի շատ եմ սիրում, քան երեկ
Հենց հիմա ես քեզ ավելի շատ եմ սիրում հենց հիմա

Օ՛, այլևս չեմ լացում

Օ՛, այլևս չեմ լացում

...

Պատեր և կամուրջներ

(1974)

Սուգում սիրո մեջ

Պետք է իջնեմ, ծնկի իջնեմ,
Պետք է իջնեմ, ծնկի իջնեմ,
Սուգվելով սիրո մեջ,
Սուգվելով սիրո մեջ,
Սուգում, սուգում, սուգում...

Երբ ճիշտը սխալ է դառնում,
Եվ դու անգոր ես դրա դեմ,
Երբ սիրեցյալդ լքել է քեզ,
Եվ դու պետք է շարունակես ապրել,
Երբ դու լույս ես կրակել դուրս,
Որը գիշերով հետ չի գա տուն,
Դու գիտես, որ պետք է, պետք է, պետք է վճարես դրա գինը:

Մեկն ու մեկդ, խնդրում եմ, օգնե՛ք ինձ,
Գիտեք, որ խեղդվում եմ ասելություն ծովում...

Պետք է իջնեմ, ծնկի իջնեմ,
Պետք է իջնեմ, ծնկի իջնեմ,
Սուգվելով սիրո մեջ,
Սուգվելով սիրո մեջ,
Սուգում, սուգում, սուգում...

Ինչ-որ թանկ և հազվագյուտ բան
Անհետանում է օդում,
Եվ դա այնքա՛ն անարդար է թվում...
Ոչ մի տեղ ոչինչ չի ստացվում
Դե, այրել եմ քո բոլոր նավակները
Եվ իմ վայրի վարսակն եմ ցանում
Եվ գիտեմ, գիտեմ, գիտեմ, որ գինն արդար է:

Պետք է իջնեմ, ծնկի իջնեմ,
Պետք է իջնեմ, ծնկի իջնեմ,
Պետք է իջնեմ, ծնկի իջնեմ,
Պետք է իջնեմ, ծնկի իջնեմ...

Ինչի միջով էլ անցնես գիշերով

Ինչի միջով էլ անցնես գիշերով՝ բարի՛ է, լա՛վ է.
Դա է քո փողը կամ կյանքը, բարի՛ է, լա՛վ է.
Ծաղիկներ խուզելիս պետք չէ սուր ճոճել, օ՛, ո՛չ, ո՛չ...

Ինչի միջով էլ անցնես քո կյանքում՝ լա՛վ է, բարի՛ է.
Մխալ վարվես թե ճիշտ՝ լա՛վ է, բարի՛ է.
Ժամանակ վատնելիս ժամացույց պետք չէ, օ՛, ո՛չ, ո՛չ...

Պինդ գրկի՛ր ինձ, սիրելի՛ս, արի և լսի՛ր ինձ.
Ես քեզ ոչ մի վատ բան չեմ անի.
Վստահի՛ր ինձ, սիրելի՛ս, արի և լսի՛ր ինձ, արի և լսի՛ր ինձ,
Արի և լսի՛ր, լսի՛ր...

Ինչի միջով էլ որ հասնես լույսին՝ բարի՛ է, լա՛վ է.
Կապույտից դուրս լինի, թե տեսադաշտից դուրս՝ բարի՛ է, լա՛վ է.
Խելքի գալու համար ատրճանակ պետք չէ, , օ , ո՛չ, ո՛չ...

Պինդ գրկի՛ր ինձ, սիրելի՛ս, արի և լսի՛ր ինձ.
Ես քեզ ոչ մի վատ բան չեմ անի.
Վստահի՛ր ինձ, սիրելի՛ս, արի և լսի՛ր ինձ, արի և լսի՛ր ինձ.
Արի և լսի՛ր, լսի՛ր...

Հին հողոտ ճանապարհին

Էլ մարդիկ չկան հին հողոտ ճանապարհին.
Էլ եղանակ չի փոխվում հին հողոտ ճանապարհին.
Մեղավից լավ է, մայրի՛կ, երբ երաշտ է սկսված,
Ա՛խ, ա՛խ, հին հողոտ ճանապարհին...

Էլ ոչ մի տարբերություն հին հողոտ ճանապարհին,
Հին հողոտ ճանապարհին՝ ձյութապատ թե չեչոտ,
Որքան էլ եղանով մուխը քամուց քամեմ,
Այո՛, այո՛, այո՛ ...

Ամառվա մի շոգ օր, մեռած անտառում շրջելիս,
Տեսա մի ծույլ մարդու չոր խոտին վերընգած.
Ասի՛ հե՛յ, պարո՛ն հումանոիդ, անձրև էլ կբերե՛ս:
Նա թե՛ պետք է որ լավ լինի, այո՛, միայն ջուր է մեզ պետք,
Զո՛վ, գուլա՛ լ ջուր, ջուր...

Էլ մարդիկ չկան հին հողոտ ճանապարհին.
Էլ եղանակ չի փոխվում հին հողոտ ճանապարհին.
Մեղավից լավ է, մայրի՛կ, երբ առավոտն է բացված,
Ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ, հին հողոտ ճանապարհին...

Շարունակ շարունակե՛ք,
Շարունակ շարունակե՛ք,
Այդքա՛ն երկար, այդքա՛ն երկար,
Բարո՛վ մնաք, բարո՛վ մնաք...

Ինչ ես ունեցել

Չեմ ուզում չարչրկել, բոլորին պայուսակ է պետք.
Գիտեմ, որ լսել եք «մերկ արքայի» մասին:

Մինչև չկորցնես՝ չես իմանա ինչ ես ունեցել,
Մինչև չկորցնես՝ չես իմանա ինչ ես ունեցել,
Մինչև չկորցնես՝ չես իմանա ինչ ես ունեցել,
Ա՛խ, ջանի՛կս, ջանի՛կս, տո՛ւր ինձ ևս մի շանս:

Շաբաթ օրվա գիշերն է, և ես պետք է պատռեմ դա,
Կիրակի առավոտյան պետք է հրաժարվեմ դրանից.
Կգա երկուշաբթին, մայրի՛կ, ուղղակի պետք է փախչեմ.
Գիտես, չե՞, որքան դժվար է դիմավորել հաջորդ օրը:

Մինչև չկորցնես՝ չես իմանա ինչ ես ունեցել,
Մինչև չկորցնես՝ չես իմանա ինչ ես ունեցել,
Մինչև չկորցնես՝ չես իմանա ինչ ես ունեցել,
Ա՛խ, ջանի՛կս, ջանի՛կս, տո՛ւր ինձ ևս մի շանս:

Գիտես, չե՞, որքան շատ է դա փոխվում, այնքան նույնն է մնում.
Դու պետք է կախ տաս ինքզինք, դու պետք է կտրես թուկը:

Մինչև չկորցնես՝ չես իմանա ինչ ես ունեցել,
Մինչև չկորցնես՝ չես իմանա ինչ ես ունեցել,
Մինչև չկորցնես՝ չես իմանա ինչ ես ունեցել,
Ա՛խ, ջանի՛կս, ջանի՛կս, տո՛ւր ինձ ևս մի շանս:

Ողջ լինեք

Ողջ լինեք, որտեղ էլ որ լինեք.
Քամուց քշված երեխա՝ ընկնող աստղի վրա...
Անհանգիստ ոգիները հեռանում են,
Թեև դեռ խորն ենք նստած միմյանց սրտերում:

Ոմանք ասում են, թե ամեն ինչի վերջն է
Հիմա, երբ բացել ենք մեր թևերը.
Բայց մենք ավելի լավ գիտենք, սիրելի՛ս,
Մնամե՞ջ օղակն անցյալ տարվա արձագանքն է սուս:

Ողջ լինեք, որտեղ էլ որ լինեք
Հիմա նրան գրկած.
Եղեք ջերմ և բարի սրտով
Եվ հիշեք. թեև սերը տարօրինակ բան է,
Այժմ և ընդմիջտ մեր սերը կմնա:

Տազնապած եմ

Ես տազնապած եմ, ես տազնապած եմ, ես տազնապած եմ,
Ես տազնապած եմ, շա՛տ եմ տազնապած
Ես տազնապած եմ, ես տազնապած եմ, ես տազնապած եմ
Անցնող տարիներինս համար,
Այն գնի համար, որ վճարեցի,
Ծղոտներիս համար հեռու քշվող:

Պետք չէ տառապել,
Դա այն է, ինչ կա.
Ոչ զանգի գիրքը և ոչ էլ մոմը
Չեն կարող հանել քեզ այս վիճակից, օ՛, ոչ:

Ես տազնապած եմ, ես տազնապած եմ, ես տազնապած եմ

Ես տազնապած եմ, հեյ-վա՛խ...

Ես տազնապած եմ, ես տազնապած եմ, ես տազնապած եմ.

Իմ կյանքի ամեն մի օրը

Պարզապես գոյատևման ջանք է,

Ես միայն ուզում եմ ողջ մնալ:

Պե՛տք չէ անհանգստանալ.

Դրախտում լինի, թե դժոխքում՝

Պարզապես պարի՛ր երաժշտության ներքո.

Դու այնքա՛ն լավ ես դա անում, լավ, լավ:

Ատելությունն ու խանդն ինձ մահ կբերեն.

Թերևս ես դա գիտեի հենց սկզբից...

Երգ հյուսեմ սիրո և խաղաղության մասին.

Չեմ ուզում նայել կարմիր հում մսին

Անիծյալ կանաչ աչքերով ուղիղ քո սրտից...

Ես հոգնել եմ, հոգնել եմ, հոգնել եմ

Այսքան մենակ մնալուց.

Էլ տեղ չի մնացել, որ ինքս ինձ զանգեմ

Գլորվող քարի պես...

Անակնկալ, Անակնկալ

(Պարադոքսի քաղցր թռչուն)

Քաղցր, ինչպես հաջողության հոտը,

Նրա մարմինը տաք է ու խոնավ.

Նա ինձ տանում է այս սարսափելի մենության միջով՝

Իսկական բարձր թիթեռի պես, ա՛ իս, ես

Զգում եմ, զգում եմ, զգում եմ նրա կարիքը:

Ճիշտ այնպես, ինչպես ուռենու ծառը՝

Գարնան շունչ ես տեսնում

Եվ, ախպե՛րս, դու չգիտես, թե նա ինչ է անում ինձ.
Նա ստիպում է ինձ քրտնել և մոռանալ, թե ով եմ ես.
Ես զգում եմ, զգում եմ, զգում եմ նրա կարիքը:

Դե, ինձ հետաքրքրում էր, թե որքան դա կարող է այդպես
Շարունակվել, շարունակվել և շարունակվել.
Ես կարծում էի, թե երբեք չեմ զարմանա,
Բայց թերևս ի վերջո կծեի սեփական լեզուս.
Ա՛խ, այո՛, շա՛տ դժվար է ընդունել, որ դու սխալվել ես:

Դրախտային թռչուն՝
Արևածագն աչքերի մեջ...
Միայն Աստծուն է հայտնի այսպիսի քաղցր անակնկալ.
Ես կույր էի, և նա ինձ միտք ներշնչեց, որ ես
Միրում եմ, սիրում եմ, սիրում եմ, սիրում եմ, ես սիրու՛մ եմ նրան,
Ես սիրում եմ, սիրում եմ, սիրում եմ, ես սիրու՛մ եմ նրան...

Քաղցրանուշ, քաղցրանուշ սեր
Քաղցրանուշ, քաղցրանուշ սեր
....

Ոչ ոք քեզ չի սիրում (երբ դու խեղճացած ես)

Ոչ ոք քեզ չի սիրում, երբ դու խեղճացած ես.
Ոչ ոք քեզ չի տեսնում, երբ դու իններորդ երկնքում ես.
Բոլորի հոգսն ու ցավը դրամն է և լուման՝
Ես քո մեջքը քորեմ, իսկ դու՝ իմը:

Ես անցել եմ մյուս կողմը
Եվ ցույց տվել քեզ ամեն բան, թաքցնելու ոչինչ չունեմ,
Եվ դեռ ինձ հարցնում ես՝ սիրու՞մ եմ քեզ, թե՞ դա մի այլ բան է...
Կարող եմ քեզ միայն ասել, որ այս ամենը շոու-բիզ է,
Կարող եմ քեզ միայն ասել, որ այս ամենը շոու-բիզ է:

Ոչ որք քեզ չի սիրում, երբ դու խեղճացած ես.
Ոչ որք քեզ չի տեսնում, երբ դու իններորդ երկնքում ես.
Բոլորի հոգսն ու ցավը դրամն է և լուման՝
Ես քո մեջքը քորեմ, իսկ դու՝ իմը:

Ես արդեն շատ անգամ եմ անցել ջրերի միջով,
Տեսել եմ միաչքանի կախարդ՝ կույրերին առաջնորդող,
Եվ դեռ ինձ հարցնում ես՝ սիրում եմ քեզ, թե՞ այլ բան եմ ասում...
Ամեն անգամ, երբ մատս դնում եմ դրա վրա, այն սահում է,
Ամեն անգամ, երբ մատս դնում եմ դրա վրա, այն սահում է:

Ուրեմն, առավոտյան նայում եմ հայելու մեջ ու տեսնում... հեյ-վա՛ իս:
Հետո պառկում եմ մթության մեջ և գիտեմ, որ չեմ քնի, հեյ-վա՛ իս:

Ոչ որք քեզ չի սիրում, երբ ծեր ես ու ալեհեր,
Ոչ մեկին պետք չես, երբ գլխիվայր ես շրջված.
Բոլորը հոգսն իրենց ծննդյան օրը հայտնի դարձնելն է,
Բոլորը սիրում են քեզ, երբ վեց ոտնաչափ բարձր ես գետնից:

Դիտելով անիվները

Մարդիկ ասում են, թե ես խենթի պես եմ անում, ինչ անում եմ.
Դե, նրանք ամեն կերպ փորձում են ինձ կործանումից փրկել.
Երբ ասում եմ լավ եմ, նրանք ինձ մի տեսակ տարօրինակ են նայում՝
Դու, անշուշտ, երջանիկ չես հիմա, որ էլ խաղ չես խաղում:

Մարդիկ ասում են, թե ծուլանում եմ երազել կյանքիս մասին.
Դե, նրանք զանազան խորհուրդներով ինձ լուսավորում են.
Երբ ասում եմ, թե լավ եմ զգում ինձ, դիտելով պատի ստվերները՝
Չե՞ս կարոտում ջահել ժամանակներդ, եթե այլևս գնդակ չես խաղում:

Ես ուղղակի նստած նայում եմ, թե ինչպես են անիվները պտտվում.
Ես իսկապես սիրում եմ դիտել դրանց պտույտը.

Այլևս կարուսել չեմ նստում, պտտվում,
Ես պարզապես պետք է հրաժարվեի դրանից:

Ինձ հարցեր տվող մարդիկ շփոթության մեջ են.
Դե, ես նրանց ասում եմ՝ խնդիր չկա,
Միայն լուծումներ կան.
Իսկ նրանք գլուխներն են շարժում և ինձ համարում խելքս թոցրած.
Ես նրանց ասում եմ, որ շտապելու կարիք չկա...
Պարզապես այստեղ նստած ժամանակ եմ անցկացնում:

Ես ուղղակի նստած նայում եմ, թե ինչպես են անիվները պտտվում.
Ես իսկապես սիրում եմ դիտել դրանց պտույտը.
Այլևս կարուսել չեմ նստում, պտտվում,
Ես պարզապես պետք է հրաժարվեի դրանից:

Կին **(Երկնքի մյուս կեսի համար)**

Ո՛վ, կին, ինձ համար դժվար է արտահայտվել,
Խառը զգացմունքներս չմտածելուս արդյունքն են,
Այն բանից հետո, երբ ընդմիջտ քո պարտքի տակ եմ:

Բայց, ո՛վ, կին, կփորձեմ արտահայտել
Իմ ներքին զգացմունքներն ու երախտագիտությունս՝
Ինձ հաջողության իմաստը ցույց տալուդ համար.
Ու՛իս, լավ է, լավ է,
Ու՛իս, լավ է, լավ է...

Ո՛վ, կին, գիտեմ, որ հասկանում ես
Փոքրիկ երեխային տղամարդու ներսում.
Խնդրում եմ, հիշիր, որ կյանքս քո ձեռքերում է,

Բայց, ո՛վ, կին, ինձ սրտիդ մոտ պահիր,

Որքան էլ հեռու պահեն մեզ իրարից,
Այն բանից հետո, երբ դա աստղերի լեզվով է գրված.
Ու իս, լավ է, լավ է,
Ու իս, լավ է, լավ է...

Ո՛վ, կին, ինդրում եմ, թույլ տուր բացատրել,
Ես երբեք չեմ ցանկացել քեզ վիշտ կամ ցավ պատճառել,
Ուստի թույլ տուր քեզ ասել կրկին ու կրկին ու կրկին՝

Ես սիրում եմ քեզ (այո՛, այո՛) այժմ և ընդմիշտ,
Ես սիրում եմ քեզ (այո՛, այո՛) այժմ և ընդմիշտ,
Ես սիրում եմ քեզ (այո՛, այո՛) այժմ և ընդմիշտ,
Ես սիրում եմ քեզ (այո՛, այո՛)...

«Սավիրված ձուկ» հավաքածուից

(1974)

Շանս տվեք խաղաղությանը

Երկու, մեկ, երկու, երեք, չորս...

Բոլորը շուրթերին իզմեր են՝
Բագիզմ, Շագիզմ, Դրագիզմ, Մաղիզմ, Ռագիզմ, Թագիզմ
Այսինչ-իզմ, այնինչ-իզմ, -իզմ, -իզմ, -իզմ...

Մենք միայն ասում ենք՝ շանս տվեք խաղաղությանը,
Մենք միայն ասում ենք՝ շանս տվեք խաղաղությանը:

Միացե՛ք...

Բոլորի շուրթերին մինիստրներն են,
Մինիստրները, քանիստրները, կանիստրները,
Բիշապներն ու վիշապները, ռաբբիստներն ու փոփ աչքերը,
Եվ ապա՝ հաջող, հաջող, հաջող ձեզ...

Մենք միայն ասում ենք՝ շանս տվեք խաղաղությանը,
Մենք միայն ասում ենք՝ շանս տվեք խաղաղությանը:

Թույլ տվեք ասել ձեզ՝
Բոլորը խոսում են
Հեղաշրջումից, բարեշրջումից, ձեռնաշարժումից,
Դրոշավորումից, կարգավորումից, ինտեգրումից,
Մեղիտացիաներից, Միացյալ ազգերից...
Դե, երանի մեզ...

Բոլորը շուրթերին են՝
Ջոն և Յոկո, Թիմ Լիրի, Ռոզմարի,
Թոմ Սմոթերս, Բոբ Դիլան, Թոմ Կուպեր,
Դերեկ Թեյլոր, Նորման Մեյլեր,

Ալան Գինսբերգ, Հարե Կրիշնա,
Հարե, Հարե Կրիշնա...

Մառը հնդկահավ

Ջերմաստիճանս բարձրանում է,
Ջերմությունս բարձր է,
Ապագա չեմ տեսնում,
Երկինք չեմ տեսնում:

Ոտքերս շա՛տ ծանր են
Ինչպես և գլուխս.
Երանի երեխա լինեի,
Երանի մեռած լինեի...

Մառը հնդկահավն ինձ բռնացրել է...

Մարմինս ցավում է,
Մազի-պզուկ ոսկոր եմ,
Էլ ջան չի մնացել,
Մենակ թողէք Ինձ...

Աչքերս լայն բաց են,
Քունս չի տանում
Վստահ եմ մի բանում՝
Խրված եմ սառցի մեջ:

Մառը հնդկահավն ինձ բռնացրել է,
Մառը հնդկահավն ինձ բռնացրել է...

Երեսունվեց ժամ է, ինչ
Գալարվում եմ ցավից.
Ու՞մ աղոթեմ հիմա,
Որ փրկի այս դժոխքից...

Օ՛, ես լավ տղա կլինեմ,
Խնդրո՛ւմ եմ, բուժե՛ք ինձ,
Խոստանում եմ ամեն ինչ,
Միայն հանե՛ք դժոխքից...

Մառը հնդկահավն ինձ բռնացրել է,
Հեյ-վա՛ իս, հեյ-վա՛ իս...

Վերահաս կարմա (Մենք բոլորս շողջողում ենք)

Վերահաս կարման կհասնի քեզ,
Կխփի ուղիղ գլխիդ.
Լավ կլինի քեզ հավաքես
Շուտով մեռնելու համար.
Միտքդ ինչո՞վ է տարված աշխարհում,
Երբ ծիծաղում ես սիրո վրա.
Ի՞նչ ես փորձում անել երկրի երեսին՝
Կախված է քեզնից, այո՛, քեզնից:

Վերահաս կարման կհասնի քեզ,
Կնայի ուղիղ դեմքիդ.
Լավ կլինի քեզ հավաքես, սիրելի՛ս,
Միացի՛ր մարդկային ռասային.
Աշխարհն ինչպիսի՞ն էս ուզում տեսնել,
Եթե ծիծաղում ես ինձ նման հիմարների վրա.
Դժոխքում ի՞նչ ես քեզ պատկերացնում.
Գերաստդ, այո՛,
Ճիշտ ես երևի...

Դե, մենք բոլորս շողջողում ենք,

Ինչպես լուսինը, աստղերն ու արևը.
Դե, մենք բոլորս շողշողում ենք
Իրար հետ միասին:

Վերահաս կարման կհասնի քեզ,
Կխփի ուղիղ ոտքերիդ.
Լավ կլինի ճանաչես եղբայրներիդ՝
Բոլոր նրանց, ում հանդիպում ես.
Ինչո՞ւ ենք մենք այստեղ.
Անշուշտ, ցավի և վախի մեջ ապրելու համար.
Ինչո՞ւ ես դու այստեղ,
Եթե ամենուր ես.
Արի և ստացի՛ր քո բաժինը:

Դե, մենք բոլորս շողշողում ենք
Ինչպես լուսինը, աստղերն ու արևը
Այո, մենք բոլորս շողշողում ենք
Շարունակե՛նք, շարունակե՛նք
Այո՛, այո՛, շատ լավ է, հայ-հա յ...

Դե, մենք բոլորս շողշողում ենք,
Ինչպես լուսինը, աստղերն ու արևը.
Այո՛, մենք բոլորս շողշողում ենք
Անընդհատ ու անվերջ:

Դե, մենք բոլորս շողշողում ենք
Ինչպես լուսինը, աստղերն ու արևը
Դե, մենք բոլորս շողշողում ենք,
Ինչպես լուսինը, աստղերն ու արևը.
Դե, մենք բոլորս շողշողում ենք,
Ինչպես լուսինը, աստղերն ու արևը.
Այո՛, մենք բոլորս շողշողում ենք,
Ինչպես լուսինը, աստղերն ու արևը...

«Ռոքնոլ» բաց համերգից

(Նյու Յորք, 1975)

Կանգնիր իմ կողքին

Երբ գիշերն իջնի
Եվ մթնի չորսկողմ,
Եվ միայն լուսնի լույսն աղոտ շողա,
Ես չեմ վախենա,
Ո՛չ, չեմ վախենա.
Քանի դեռ արթուն ես, կանգնի՛ր իմ կողքին:

Միրելի՛ս, սիրելի՛ս, կանգնի՛ր իմ կողքին.
Ա՛խ, հիմա, հենց հիմա, կանգնի՛ր իմ կողքին,
Կանգնի՛ր իմ կողքին, կանգնի՛ր իմ կողքին:

Եթե երկինքը, որին նայում եմք
Պիտի փլուզվի,
Եվ լեռը պիտի փլվի ծովի մեջ,
Չե՛մ լացի, չե՛մ լացի,
Ո՛չ, արցունք չե՛մ թափի.
Քանի դեռ արթուն ես, կանգնի՛ր իմ կողքին:

Միրելի՛ս, սիրելի՛ս, կանգնի՛ր իմ կողքին,
Ա՛խ, կողքի՛ս եղիր,
Կանգնի՛ր իմ կողքին, կանգնի՛ր իմ կողքին, կանգնի՛ր իմ կողքին:

Եթե շատ դժվար է, մի՛ եղիր կողքիս,
Բայց հիմա, ա՛խ, հիմա, կանգնի՛ր իմ կողքին,
Ա՛խ, կողքի՛ս եղիր, կանգնի՛ր իմ կողքին, կանգնի՛ր իմ կողքին:

Միրելի՛ս, սիրելի՛ս, կանգնի՛ր իմ կողքին,
Կանգնի՛ր իմ կողքին,
Ա՛խ, կողքի՛ս եղիր, կանգնի՛ր իմ կողքին, կանգնի՛ր իմ կողքին:

Բա, չե՞ս ամաչում...

Ինձ ստիպեցիր լացել,

Երբ հրաժեշտ տվեցիր.

Բա, չե՞ս ամաչում...

Արցունք թափեցի անձրևի նման.

Բա, չե՞ս ամաչում...

Չե՞-որ մեղքը քոնն է:

Կոտրեցիր իմ սիրտը՝

Ասելով. «Բաժանվում ենք»:

Բա, չե՞ս ամաչում...

Արցունք թափեցի անձրևի նման.

Բա, չե՞ս ամաչում...

Չե՞-որ մեղքը քոնն է:

Բուզի՛ ես պարում, ջանի՛կս.

Բա, չե՞ս ամաչում...

Բա, չե՞ս ամաչում...

Դե, հայացքդ շրջի՛ր...

Առայժմ, ցտեսություն,

Թեև կլացեմ.

Բա, չե՞ս ամաչում...

Արցունք թափեցի անձրևի նման

Բա, չե՞ս ամաչում...

Չե՞-որ մեղքը քոնն է:

Բուզի՛ ես պարում, ջանի՛կս.

Բա, չե՞ս ամաչում...

Բա, չե՞ս ամաչում...

Ինձ ստիպեցիր լացել,
Երբ հրաժեշտ տվեցիր.
Բա, չե՞ս ամաչում...
Արցունք թափեցի անձրևի նման.
Բա, չե՞ս ամաչում...
Չե՞-որ մեղքը քոնն է:

Բռնի Մորոնի

Մի աղջիկ ունեմ կողքիս՝ անունը Բռնի Մորոնի,
Նա նիհար է, ինչպես ձողը մակարոնի.
Ա՛յ թե ռոքնռոլ է պարում կապույտ ջինսը հագին...
Գեր չես ասի նրան՝ կաշի է ու ոսկոր:

Հիմա սիրում եմ նրան, նա էլ ինձ է սիրում
Որքա՛ն երջանիկ կլինենք, եթե
Մեր անենք խնձորի ծառի տակ, ա՛յս...

Ես ասացի նրա մորը և հորը նույնպես
Ուղղակի հենց այն, ինչ մտադրվել ենք.
Մենք կամուսնանանք և հունիսյան մի գիշեր
Ռոքնռոլ կպարենք արծաթե լուսնի տակ:

Հիմա սիրում եմ նրան, նա էլ ինձ է սիրում
Որքա՛ն երջանիկ կլինենք, եթե
Մեր անենք խնձորի ծառի տակ, ա՛յս...

Նա իմ միակն է, իմ սրտի ցանկությունն է.
Տեղն է ամեն ինչը, կյանքի թել է իրոք.
Բոլորը նրան են նայում, երբ անցնում է կողքով,
Այնքա՛ն լավ տեսք ունի, որ աչքի է զարնում:

Հիմա սիրում եմ նրան, նա էլ ինձ է սիրում

Որքա՛ն երջանիկ կլինենք, եթե
Մեր անենք ինձորի ծառի տակ, ա՛խ...

Այո՛, այո՛, ինձորի ծառի տակ
Մեր անենք, այո՛,
Մեր անենք, սեր անենք, չարչարե՛նք,
Չարչարե՛նք, չարչարե՛նք իրար, ա՛խ, ջանի՛կս...

Մոսկ այն պատճառով

Ա՛խ, հիշո՞ւմ ես այս մասին...
Ինչո՞ւ պետք է լինեի տասներեք տարեկան, երբ սա եղավ...
Թե՛ տասնչորսս էր լրացել... Թե՛ քսաներկուսս...
Հիրավի, կարող էի և տասներկու տարեկան եղած լինել:

Մոսկ այն պատճառով, որ դու հեռացար և հրաժեշտ տվիր,
Մի՞թե կարծում ես, որ կնաստեի ու կլացեի:
Նույնիսկ եթե սիրտս ինձ հուշեր այդպես վարվել,
Միրելի՛ս, ես կնախընտրեի թույլ տալ, որ գնաս:

Մոսկ այն պատճառով, որ ես տենչում եմ բարի մեկին՝
Ինձ նման լավ ու մաքուր սրտով,
Գուցե չափից շա՞տ բան եմ պահանջում,
Միրելի՛ս, խնդրո՞ւմ եմ, մի՛ կոտրիր սիրտս...

Գիտեմ, որ ինքդ քեզ խելացի ես համարում,
Վազում ես շուրջբոլոր և կոտրում սիրող սրտեր:

Մոսկ այն պատճառով, որ դու հեռացար և հրաժեշտ տվիր,
Մի՞թե կարծում ես, որ կնաստեի ու կլացեի:
Նույնիսկ եթե սիրտս ինձ հուշեր այդպես վարվել,
Միրելի՛ս, ես կնախընտրեի թույլ տալ, որ գնաս:

Մա բժիշկ Ուիլսոնն Օ' Բոգին է բարի գիշեր ասում՝
Ռեկորդ գործարանից արևելք, Նյու Յորք.
Հուսով եմք, որ դուք լավ ժամանակ եք անցկացրել.
Այստեղ բոլորն ասում են՝ «Բարև», մնաս բարով:

Մոսկ այն պատճառով, որ դու հեռացար և հրաժեշտ տվիր,
Մի՞ թե կարծում ես, որ կնաստեի ու կլացեի:
Նույնիսկ եթե սիրտս ինձ հուշեր այդպես վարվել,
Միրելի՛ս, ես կնախընտրեի թույլ տալ, որ գնաս:

Մնաս բարով, երկա՛ր,
Երկա՛ր տարիներ...

Նրան ճանաչել՝ նշանակում է սիրել

Ճանաչել, ճանաչել, ճանաչել նրան՝
Միրելին է, սիրելը, սիրելին է նրան:
Բոլորն ասում էին, որ մի օր կգա,
Երբ ես կքայլեմ նրա կողքով:
Այո՛, հենց միայն, ճանաչել նրան՝
Միրելին է, սիրելը, սիրելը նրան:
Դու գիտես, որ ես հենց դա եմ անում,
Դու գիտես, որ ես հենց դա եմ անում,
Այո՛, անում եմ, ա՛խ, դա եմ անում:

Ինչու՞, ինչու նա չի տեսնում դա...
Ա՛խ, ինչպե՞ս, որքա՞ն կույր պիտի լինել...
Մի օր նա կտեսնի,
Որ ինքը ծնվել է միայն ինձ համար, այո՛:

Ճանաչել, ճանաչել, ճանաչել նրան՝
Միրելին է, սիրելը, սիրելը նրան:

Հենց միայն նրա ժպիտը տեսնելուց
Կյանքս արժեք է ստանում ինձ համար:
Այո, սոսկ իմանալ, ճանաչել նրան,
Գիտես, որ սիրելն է, սիրելը, սիրելը նրան:
Դու գիտես, որ ես հենց դա եմ անում,
Դու գիտես, որ ես հենց դա եմ անում,
Այո՛, դա եմ անում:

Շնորհավոր Սուրբ Ծնունդ (Պատերազմն ավարտված է)

Շնորհավո՛ր Սուրբ Ծնունդ, Կյոկո,
Շնորհավո՛ր Սուրբ Ծնունդ, Ջուլիան...

Եվ այսպես, Սուրբ Ծնունդ է.
Ի՞նչ էք հասցրել անել
Անցած մեկ տարում,
Եվ ահա նորն է սկսվում:
Եվ այսպես, Սուրբ Ծնունդ է
Հուսով եմ, որ ուրախ կլինեք,
Մերձավոր ու հարազատ
Ծեր ու ջահել...

Շնորհավո՛ր Սուրբ Ծնունդ
Եվ ուրախ Նոր տարի
Հուսանք, որ լավ տարի կլինի՝
Առանց տազնապների:

Եվ այսպես, Սուրբ Ծնունդ է (պատերազմն ավարտված է)
Թույլի և ուժեղի համար (եթե ուզում են)
Հարուստների և աղքատների համար (պատերազմն ավարտված է)
Ճանապարհն այնքա՛ն երկար է (այժմ)
Եվ այսպես, ուրախ Սուրբ Ծնունդ (պատերազմն ավարտված է)

Մնի և սպիտակի համար (եթե ուզում են)
Դեղինի և կարմրի համար (պատերազմն ավարտված է)
Եկեք վերջ տանք բոլոր կռիվներին (հիմա)

Շնորհավո՛ր Սուրբ Ծնունդ
Եվ ուրախ Նոր տարի
Հուսանք, որ լավ տարի կլինի՝
Առանց տազնապների:

Եվ այսպես, Սուրբ Ծնունդ է (պատերազմն ավարտված է)
Իսկ ի՞նչ ենք հասցրել անել (երբ ցանկացել ենք)
Անցած մեկ տարում (պատերազմն ավարտված է)
Եվ ահա նորն է սկսվում (հիմա)
Եվ այսպես, ուրախ Սուրբ Ծնունդ (պատերազմն ավարտված է)
Հուսով ենք, որ ուրախ կլինենք (եթե ցանկանում ենք)
Մերձավոր ու հարազատ (պատերազմն ավարտված է)
Ծեր ու ջահել (այժմ)

Շնորհավո՛ր Սուրբ Ծնունդ
Եվ ուրախ Նոր տարի
Հուսանք, որ լավ տարի կլինի՝
Առանց տազնապների:

Պատերազմն ավարտված է, եթե ուզում եք,
Պատերազմն այժմ ավարտված է:

Շնորհավո՛ր Սուրբ Ծնունդ...

Երկակի ֆանտազիա

(1980)

Դա սուկ կնամանվի սկզբից սկսելուն

Մեր համատեղ կյանքը այնքա՛ն թանկ է երկուսիս համար...
Մենք հասունացել ենք, մենք հասունացել ենք,
Չնայած մեր սերը դեռ առանձնահատուկ է.
Արի՛ օգտվենք մեր հնարավորությունից
Եվ թռչենք ինչ-որ մեկուսի վայր:

Վաղու՛ց մենք իրար ժամանակ չենք հատկացրել...
Ոչ մեկիս մեղքը չէ դա,
Գիտեմ, որ ժամանակը շա՛տ արագ է թռչում,
Բայց երբ տեսնում եմ քեզ, սիրելի՛ս,
Կարծես երկուսս էլ նորից սիրահարվում ենք՝
Դա սուկ կնամանվի սկզբից սկսելուն, սկզբից սկսելուն:

Մեր ամեն օրը սիրուն էինք տալիս,
Ինչո՞ւ սիրով չգրադվենք գեղեցիկ և հեշտ,
Ժամանակն է, որ բացենք մեր թևերն ու թռչենք,
Ուրիշ օրվա չթողենք մեր սերը՝
Դա սուկ կնամանվի սկզբից սկսելուն, սկզբից սկսելուն:

Ինչու՞ մենք չենք առանձնանում,
Ճամփորդում ինչ-որ տեղ հեռու, հեռու,
Մենք նորից միասին կլինենք առանձին,
Ինչպես վարվում էինք վաղեմի օրերին.
Լա՛ վ, լա՛ վ, սիրելիս...

Վաղու՛ց մենք իրար ժամանակ չենք հատկացրել...
Ոչ մեկիս մեղքը չէ դա,
Գիտեմ, որ ժամանակը շա՛տ արագ է թռչում,
Բայց երբ տեսնում եմ քեզ, սիրելի՛ս,
Կարծես երկուսս էլ նորից սիրահարվում ենք՝

Դա սուկ կնմանվի սկզբից սկսելուն, սկզբից սկսելուն:

Մեր համատեղ կյանքը այնքա՛ն թանկ է երկուսիս համար...
Մենք հասունացել ենք, մենք հասունացել ենք,
Չնայած մեր սերը դեռ առանձնահատուկ է.
Արի՛ օգտվենք մեր հնարավորությունից
Եվ թռչենք ինչ-որ մեկուսի վայր:

Տուն մաքրելու ժամանակը

Լուսնի լույսը ջրերի վրա է,
Արևի լույսը՝ դեմքիս,
Երկուսով միասին
Մենք մեր տեղում ենք,
Աստվածները երկնքում են,
Հրեշտակները մեր նկատմամբ լավ են տրամադրված,
Պատգամաբերը խոսել է,
Մենք հասել ենք կատարյալ կախարդանքի:

Հիմա սկսվում է՝ թող սկսվի
Տուն մաքրելու ժամանակը
(Ցույց տանք մայրերին, թե ինչպես դա անել):

Թագուհին հաշվապահի տեղում
Փողերի հաշիվն է պահում,
Թագավորը խոհանոցում
Մեղրահաց է պատրաստում,
Չկան ընկերներ և թշնամիներ,
Ամեն ինչ լրիվ անվճար է,
Առնետներ չկան, կախարդական նավում
Կատարյալ ներդաշնակություն է տիրում:

Հիմա սկսվում է՝ թող սկսվի

Տուն մաքրելու ժամանակը
(Ցույց տանք մայրերին, թե ինչպես դա անել):

Թեև ճամփորդում ենք հեռուներում,
Ուր էլ որ շրջենք,
Շրջանի կենտրոնը
Միշտ մեր տունը կլինի:

Աստվածները երկնքում են,
Հրեշտակները մեր նկատմամբ լավ են տրամադրված,
Պատգամաբերը խոսել է,
Մենք հասել ենք կատարյալ կախարդանքի:

Ես կորցնում եմ քեզ

Ահա ինչ-որ անծանոթի սենյակում եմ
Ուշ կեսօրին.
Ի՞նչ գործ ունեմ ընդհանրապես այստեղ:
Այլևս կասկած չունեմ՝
Ես կորցնում եմ քեզ,
Ես կորցնում եմ քեզ...

Ինչ-որ կերպ լարերը հատվել են,
Հաղորդակցությունը կորել է,
Անգամ հեռախոսով չեմ կարող քեզ հետ կանչել
Մնում է սուկ բղավեմ այս մասին՝
Ես կորցնում եմ քեզ,
Ես կորցնում եմ քեզ...

Դե, այստեղ՝ անվճռականության հովտում
Զգիտեմ ինչ անել.
Ես զգում եմ, որ հեռանում ես,
Ես զգում եմ, որ հեռանում ես,

Ես կորցնում եմ քեզ,
Ես կորցնում եմ քեզ...

Հիմա դու ասում ես, որ բավարարված չես եղել,
Բայց ես քեզ հիշեցնելով բոլոր վատ, վատ, բաները՝
Էլ ի՞նչ պիտի անեմ այս դժոխքում.
Պարզապես դրանց վրա վիրակապ դնեմ
Եվ դադարեցնե՞մ արյունահոսությունը հիմա
Դադարեցնե՞մ արյունահոսությունը հիմա:
Լավ...

Ես կորցնում եմ քեզ,
Ես կորցնում եմ քեզ...

Լավ, լավ, լավ,
Գիտեմ, որ այն ժամանակ վիրավորել եմ քեզ
Բայց, ո՞վ, դժոխք, դա այն ժամանակ էր, երբ
Դու դեռ պետք է կրեի՞ր այդ խաչը (Դե՛ն նետիր հիմա...)
Չեմ ուզում լսել այդ մասին.
Ես կորցնում եմ քեզ,
Ես կորցնում եմ քեզ...

Չեմ ուզում կորցնել քեզ հիմա...
Դեհ... Ո՛չ, ո՛չ, ո՛չ, ո՛չ...

Միրելի Յոկո

Նույնիսկ այսքան տարի անց,
Ես կարոտում եմ քեզ, երբ իմ կողքին չես,
Երանի այստեղ լինեիր, իմ սիրելի՛ Յոկո,

Նույնիսկ ընդամենը մեկ օր անց
Ես կարոտում եմ քեզ, երբ հեռանում ես,

Ուզում եմ, որ այսօր կողքիս լինես, սիրելի՛ Յոկո,

Նույնիսկ ընդամենը մեկ գիշեր անց,
Ես կարոտում եմ քեզ, և դա սրտովս չէ,
Ուզում եմ, որ այսօր կողքիս լինես, սիրելի՛ Յոկո,

Նույնիսկ ընդամենը մեկ ժամ անց
Ես թուլանում եմ խամրող ծաղկի պես.
Աշխարհում ոչինչ նման չէ մեր սիրուն, սիրելի՛ Յոկոն,

Ա՛խ, Յոկո,
Ես երբեք, երբեք չեմ թողնի, որ հեռանաս.
Ա՛խ, Յոկո,
Ես երբեք, երբեք չեմ թողնի, որ հեռանաս.

Նույնիսկ երբ մղոններով հեռու ծովում եմ,
Եվ տեղս չեմ գտնում,
Քո հոգին հսկում է ինձ, սիրելի՛ Յոկո,

Նույնիսկ երբ դիտում եմ TV,
Այնտեղ էլ եմ զգում բացակայությունդ,
Ինչպես կողքիս քեզ պատկած չեմ տեսնում:

Ա՛խ, Յոկո
Ես երբեք, երբեք չեմ թողնի, որ հեռանաս.
Ա՛խ, Յոկո,
Ես երբեք, երբեք չեմ թողնի, որ հեռանաս:

Նույնիսկ այսքան ժամանակ անց,
Կարոտում եմ քեզ, ինչպես անշող արև,
Առանց քեզ կես միտք եմ, սիրելի՛ Յոկո,

Ի վերջո, ամեն ինչ իրոք ասված ու արված է,
Մենք երկուսս իրոք մեկ ենք,
Աստվածուհին իրոք ժպտաց մեր սիրո առիթով, սիրելի Յոկո:

Օգնիր ինձ օգնել ինձ

Եվ այսպես, մեծ դժվարությամբ փորձում եմ կենդանի մնալ,
Բայց կործանման հրեշտակը շարունակում է ամենուր հետապնդել ինձ.
Բայց սիրտս վկայում է,
Որ մենք իրականում երբեք չենք բաժանվել, օ՛, ոչ:

Ասում են՝ Տերն օգնում է նրանց, ովքեր օգնում են իրենք իրենց,
Ուստի այս հարցն առաջ եմ քաշում այն հույսով, որ բարի կլինեք,
Քանզի խորապես գիտեմ, որ երբեք գոհ չեմ եղել, ա՛յ, ոչ:

Տե՛ր, օգնի՛ր ինձ, Տե՛ր,
Խնդրո՛ւմ եմ, օգնի՛ր ինձ, Տե՛ր, այո՛, այո՛, այո՛...
Օգնիր ինձ օգնել ինձ,
Օգնիր ինձ օգնել ինձ...

Կաթ և մեղր (1984)

Անքուն գիշեր

Անքուն գիշեր...
Պայծառ Լուսին...
Ես ընդամենը խնդրում եմ
Երեք բուպե սեր:

Ոտքերս...
Ինչ եմ անելու ոտքերիս հետ
Նրանք այնքան տաք են, որ չեն մնա մահճակալի վրա
Եվ ինձ ուղղակի ապշեցնում են:

Անքուն գիշեր...
Ես ընդամենը խնդրում եմ
Երեք բուպե սեր:

Գլուխս...
Ի՞նչ եմ անելու այս գլխով...
Այն այնքան թեթև է, որ ուղղակի ինձ վախեցնում է.
Լի է շամպայնով, երազանքներով:

Անքուն գիշեր...
Ես ընդամենը խնդրում եմ
Երեք բուպե սեր:

Այս նկարը պետք է խելահեղ վաճառք ունենա.
Նկատի ունեմ այն, որ այնտեղ շատ են միայնակ մարդիկ.
Ես ուզում եմ գնալ գնդակ խաղալու.
Ես ուզում եմ տալ ամեն ինչ, և ես կվերցնեմ ամեն ինչ:

Անքուն գիշեր.
Ես ընդամենը խնդրում եմ...
Եվ ի՞նչ եմ ես խնդրում...

Ես չեմ ուզում առերեսվել դրա հետ

Ասա, որ գնալու տեղ ես փնտրում.
Մի տեղ, որտեղ ոչ ոք չի լսել քո անունը.
Դու մոռացություն ես ակնկալում
Մեկի համար, ով Դեմք է
Փառքի Սրահում:

Ես չեմ ուզում առերեսվել դրա հետ, ա՛խ, ոչ...
Ես չեմ ուզում առերեսվել, ո՛չ, ո՛չ, ո՛չ...
Դե, ես կարող եմ կուլ տալ ամեն բան,
Բայց ես պարզապես չեմ կարող սա տանել...

Ասա, որ խաղաղություն և սեր ես փնտրում,
Լինելով մեծ հին խմբի ղեկավար.
Դու ցանկանում ես փրկել մարդկությանը,
Բայց դա այն մարդիկ են, ում դու պարզապես տանել չես կարող...

Ես չեմ ուզում առերեսվել դրա հետ, ա՛խ, ո՛չ...
Ես չեմ ուզում առերեսվել, ո՛չ, ո՛չ, ո՛չ...
Դե, ես կարող եմ երգել իմ ընթրիքի համար,
Բայց ես պարզապես չեմ ուզում դա անել:

Լավ, հիմա դու փնտրում ես ճշմարտության աշխարհ՝
Փորձելով ավելի լավ ճանապարհ գտնել.
Եկել է ինքդ քեզ տեսնելու ժամանակը
Իսկ դու միշտ հակառակ կողմ ես նայում...

Ես չեմ ուզում առերեսվել դրա հետ, ա՛խ, ո՛չ...
Ես չեմ ուզում առերեսվել, ո՛չ, ո՛չ, ո՛չ...
Դե, ես կարող եմ տեսնել խոստացված երկիրը
Եվ գիտեմ, որ կարող եմ դա անել:

Չեմ ուզում առերեսվել, գիտեմ.

Չեմ ուզում առերեսվել դրա հետ, ա՛խ, ո՛չ...
Չեմ ուզում առերեսվել դրա հետ, ա՛խ, ո՛չ...
Ես չեմ ուզում առերեսվել դրա հետ...

Ես չեմ ուզում առերեսվել դրա հետ...

Ես այլևս չեմ կարող դիմակայել դրան.
Ամեն անգամ հայելու մեջ եմ նայում
Եվ այնտեղ չեմ տեսնում ոչ ոքի...

Ինձ ոչ ոք չի ասել

Բոլորը խոսում են, և ոչ ոք բառ չի ասում.
Բոլորը սիրով են զբաղվում, և անհանգստացած չէ ոչ ոք.
Աստիճաններից անմիջապես ներքև լոգարանում նացիստներ կան.
Միշտ ինչ-որ բան է տեղի ունենում և ոչինչ չի ձեռնարկվում.
Կարթսայի մեջ միշտ ինչ-որ բան է եփվում և վերջը չի երևում.
Չինաստանում սովամահ են լինում, ուրեմն ավարտե՛ք ձեր գործերը:

Ինձ ոչ ոք չի ասել, որ նման օրեր կլինեն
Ինձ ոչ ոք չի ասել, որ նման օրեր կլինեն
Ինձ ոչ ոք չի ասել, որ նման օրեր կլինեն
Իրոք, տարօրինակ օրեր են, տարօրինա՛կ օրեր...

Բոլորը վազքի մեջ են, բայց ոչ ոք շարժում չի անում.
Բոլորը հաղթող են, բայց կորցնելու ոչինչ չի մնացել.
Կատմանդուի հյուսիսում մի փոքրիկ դեղին կուռք կա.
Բոլորը թռչում են, բայց ոչ ոք գետնից բարձր չէ.
Բոլորը լաց են լինում, բայց ոչ ոքի ձայնը չի լսվում.
Ֆիլմերում մեզ համար տեղ կա, որոնցում միայն պառկել է պետք:

Ինձ ոչ ոք չի ասել, որ նման օրեր կլինեն

Ինձ ոչ ոք չի ասել, որ նման օրեր կլինեն
Ինձ ոչ ոք չի ասել, որ նման օրեր կլինեն
Իրոք՝ տարօրինակ օրեր են, ամենատարօրինակ, մա՛մ ջան...

Բոլորը ծխում են, և ոչ ոք չի բարձրանում.
Բոլորը թռչում են և երբեք չեն հասնում երկինք.
Նյու Յորքում ՉԹՕ կա, և դա ինձ այնքան էլ չի զարմացնում:

Ինձ ոչ ոք չի ասել, որ նման օրեր կլինեն
Ինձ ոչ ոք չի ասել, որ նման օրեր կլինեն
Ինձ ոչ ոք չի ասել, որ նման օրեր կլինեն
Իսկապես տարօրինակ օրեր են, ամենատարօրինակ, մա՛մ ջան...

Ո՛վ, ողջախոհություն...

Խելագար լինելը միակ իսելամիտ բանն է.
Հոգեխանգարվածն ամբողջ է կառուցում նյարդայինի համար:
Ես չգիտեմ, թե ինչ անեմ ողջախոհությանս հետ,
Երբ աշխարհը աղետի եզրին է:

Ո՛վ, ողջախոհություն,
Ո՛վ, ողջախոհություն,
Ի՞նչ անեմ քեզ հետ.
Խմե՛մ, կրակեմ՞, ի՞նչ է ուզածդ...
Դժոխք սատանայի պես միշտ կանգնած ես իմ հետևում:

Ո՛վ, ողջախոհություն,
Խոհեմություն,
Ինչո՞ւ բաց չես թողնում, որ գնամ.
Բա՛ց թող, բա՛ց թող, կտրվի՛ր ինձնից...

Փոխառված ժամանակ

Երբ շատ ջահել էի՝
Շփոթության և խորը հուսահատության մեջ էի.
Երբ շատ ջահել էի, ախ-ա՛խ,
Ազատության և ուժի պատրանքներ ունեի:

Երբ դեռ ջահել էի,
Լի էի գաղափարներով և կոտրված երազանքներով (ընկե՛րս).
Երբ դեռ ջահել էի, ախ-ա՛խ,
Ամեն ինչ պարզ էր ինձ համար, բայց ո՛չ այնքան պարզ:

Ապրում էի փոխառված ժամանակով՝
Առանց վաղվա օրվա մասին մտածելու.
Ապրում էի փոխառված ժամանակով՝
Առանց վաղվա օրվա մասին մտածելու:

Հիմա արդեն մեծ եմ
Եվ ինչքան շատ բան եմ տեսնում, այնքան քիչ բան գիտեմ հաստատ.
Հիմա մեծացել եմ, ախ-ա՛խ,
Ապագան ավելի պայծառ է երևում, ուստի ժամն է, որ հիմա

Ապրեմ փոխառված ժամանակով՝
Առանց վաղվա օրվա մասին մտածելու.
Ապրեմ փոխառված ժամանակով՝
Առանց վաղվա օրվա մասին մտածելու:

Լավ կլինի ավելի մեծ լինեմ,
Զի մեկ օրը համարժեք չէ մեկ տարուն.
Լավ կլինի ավելի մեծ լինեմ, ախ-ա՛խ,
Բարդություն քիչ կլինի, ամեն ինչ պարզ կդառնա:

Կապրեմ փոխառված ժամանակով՝
Առանց վաղվա օրվա մասին մտածելու.

Կապրեմ փոխառված ժամանակով՝
Առանց վաղվա օրվա մասին մտածելու:

Թույլ տուր ինձ հաշվել եղանակները

Թույլ տուր ինձ հաշվել քեզ սիրելու իմ եղանակները.
Դա նման է այն մեղմօրոք քամուն, որ զգացվում է վաղ լուսաբացին,
Նան արևի այն ճառագայթին, որ առաջինն է ջերմացնում ցողին,
Նման է ոսկե շղարշով ամպին, որը մեղմորեն շշնջում է մեզ՝
Լա՛վ օր կլինի, լա՛վ օր կլինի անշուշտ ձեզ համար...
Շնորհակա՛լ եմ, շնորհակա՛լ եմ, շնորհակա՛լ եմ:

Թույլ տուր ինձ հաշվել, քեզ կարոտելուս եղանակները.
Դա նման է իմ մանկության այգու հաստաբուն կաղնուն,
Նան հեռավոր Եգիպտոսում իմ ամռանն առաջին,
Նման է այն տաք երեկոներին, երբ դու տողեր ես կարդում ինձ համար,
Եվ մենք երկուսով խոր գիտակցում ենք՝
Լա՛վ ժամանակ է, լա՛վ ժամանակ է անշուշտ մեզ համար...
Շնորհակա՛լ եմ, շնորհակա՛լ եմ, շնորհակա՛լ եմ:

Թույլ տուր ինձ հաշվել քեզ տեսնելու իմ եղանակները.
Դա նման է այն լեռնային լճին, որի մասին դու լսել ես, գիտեմ,
Նման է աշնան կապույտ երկնքին, որը շա՛տ երկար կապույտ է մնում,
Ինձ շրջապատող օդին է նման, որն ինձ նրբորեն պահում է գրկում՝
Համոզիչ տոնով ինձ շշնջալով, որ միշտ այստեղ ես և միշտ ինձ համար...
Շնորհակա՛լ եմ, շնորհակա՛լ եմ, շնորհակա՛լ եմ:

Ծերացիր ինձ հետ

Ծերացիր ինձ հետ միասին
Մեր լավագույնը առջևում է դեռ
Երբ կհասնենք մեր այդ ժամանակին.
Մենք կլինենք մի հոգու պես,
Աստված օրհնի մեր սերը,
Աստված օրհնի մեր սերը:

Ծերացիր ինձ հետ միասին
Ինչպես նույն ծառի երկու ճյուղ.
Դիմացի՛ր մայրամուտին,
Երբ օրն ավարտվում է.
Աստված օրհնի մեր սերը,
Աստված օրհնի մեր սերը:

Մեր կյանքն արի անցկացնենք
Տղամարդ ու կին միասին.
Աշխարհը վերջ չունենա,
Աշխարհ վերջ չունենա:

Ծերացիր ինձ հետ միասին,
Ինչ էլ ճակատագիրը մեզ բերի՝
Մեզ հասկանալի կլինի,
Երբ ճշմարիտ է մեր սերը.
Աստված օրհնի մեր սերը,
Աստված օրհնի մեր սերը:

Դու միակն ես

Լեռները կարող են շարժվել, գետը կարող է հոսել,
Իսկ դու պահում ես իմ ինքնությունն ու լինելիությունը.
Ինչպե՞ս ասեմ քեզ, ինչպե՞ս բացատրեմ,
Որ դու միակն ես...

Աստղերը կարող են շարժվել, ժամանակը կարող է թռչել,
Իսկ դու պահում ես ազատությունս
Եվ թողնում ինձ ազատ
Ինչպե՞ս ասեմ քեզ, ինչպե՞ս բացատրեմ,
Որ դու միակն ես, դու իմ միակն ես...

Աշխարհի աչքին մենք Լորել ու Հարոլդ էինք,
Իսկ մեր մտքերում՝ Հիթլերի ու Քեթի.
Իմաստության մի պահ
Մենք պայծառատես ու կախարդ էինք:

Ազատության պահին
Դոն Կիխոտ էինք ու Սանչո Պասսա,
Իսկ իրականում՝ սոսկ տղա – աղջիկ,
Որ հետ չեն նայում:

Ի՞նչպես ասեմ քեզ,
Ի՞նչպես ասեմ քեզ...
Ինչպես կարող եմ ասել,
Ինչպես բացատրել,

Որ դու միակն ես,
Դու իմ միակն ես,
Որ դու միակն ես,
Դու իմ միակն ես:

«Բիրթիզ» քառյակի երգացանկից
(Ջոն Լենոնի լավագույն կատարումներից)

Իրական սեր

Իմ բոլոր մանր ծրագրերն ու գործերը
Կորան ինչ-որ մոռացված երազի պես,
Կարծես այն ամենը, ինչ իրոք արել եմ՝
Սպասելն էր քեզ:

Ինչպես փոքրիկ աղջիկներն ու տղաներն են
Մոռացել իրենց փոքրիկ խաղալիքները,
Նրանց նման ես էլ ինչ իրոք արել եմ՝
Սպասելն էր քեզ:

Մենություն մի՛ տենչա,
Պետք չէ մենակ մնալ:

Դա իրական սեր է,
Իրական է, այո՛, իրական սեր է,
Իրական է այն:

Այս պահից գիտեմ՝
Այնտեղ, որտեղ իմ կյանքը կընթանա,
Կթվա, որ այն, ինչ իրոք անում եմ
Սպասելն է սիրուն:

Պետք չէ վախենալ,
Վախի կարիք չկա:

Դա իրական սերն է,
Իրական է, այո՛, իրական սերն է,
Իրական է այն:

Կարծում էի նախկինում սիրահարված եմ եղել,

Բայց իմ սրտում ես միշտ ավելին եմ ուզել.
Ուրեմն, այն ամենը, ինչ իրոք արել եմ՝
Սպասելն էր քեզ:

Մենություն մի՛ տենչա,
Պետք չէ մենակ մնալ:

Դա իրական սեր է,
Իրական է, այո՛, իրական սեր է,
Իրական է այն:

Օգնի՛ր...

Օգնի՛ր, ես մեկի կարիքն եմ զգում...
Օգնի՛ր, ո՛չ սոսկ ինչ-որ մեկի...
Օգնի՛ր, դու գիտես, որ ես մեկի կարիքն եմ զգում, օգնի՛ր...

Երբ ես երիտասարդ էի՝ ավելի երիտասարդ, քան այսօր,
Որևէ մեկի օգնության կարիքը չեմ զգացել երբեք:
Բայց այն օրերն անցել են, հիմա այնքան էլ վստահ չեմ,
Հիմա հասկացել եմ, որ փոխել եմ միտքս ու բացել դռներս:

Օգնի՛ր ինձ, եթե կարող ես, ես վատ եմ զգում...
Եվ ես գնահատում եմ, որ մոտակայքում ես:
Օգնի՛ր ինձ, ոտքերս իջեցրու գետնին,
Մի՛ թե չես ուզում, ինդրո՞ւմ եմ, օգնի՛ր ինձ:

Եվ հիմա իմ կյանքը փոխվել է շատ առումներով,
Անկախությունս կարծես անհետացել է մշուշի մեջ:
Բայց երբեմն ինձ այնքա՛ն անապահով եմ զգում,
Եվ գիտեմ, որ սոսկ քո կարիքն եմ զգում նախկինից առավել:

Օգնի՛ր ինձ, եթե կարող ես, ես վատ եմ զգում...
Եվ ես գնահատում եմ, որ մոտակայքում ես:
Օգնի՛ր ինձ, ոտքերս իջեցրու գետնին,
Մի՞թե չես ուզում, խնդրո՛ւմ եմ, օգնի՛ր ինձ:

Երբ ես երիտասարդ էի՝ ավելի երիտասարդ, քան այսօր,
Որևէ մեկի օգնության կարիքը չեմ զգացել երբեք:
Բայց այն օրերն անցել են, հիմա այնքան էլ վստահ չեմ,
Հիմա հասկացել եմ, որ փոխել եմ միտքս ու բացել դռներս:

Օգնի՛ր ինձ, եթե կարող ես, ես վատ եմ զգում...
Եվ ես գնահատում եմ, որ մոտակայքում ես:
Օգնի՛ր ինձ, ոտքերս իջեցրու գետնին,
Մի՞թե չես ուզում, խնդրո՛ւմ եմ, օգնի՛ր ինձ, օգնի՛ր ինձ, ա՛խ...

Իմ կյանքում

Կան վայրեր, որոնք ես կհիշեմ
Իմ ամբողջ կյանքում, չնայած որոշները փոխվել են,
Կան, որ փոխվել են ընդամիշտ և ո՛չ դեպի լավը,
Որոշներն էլ չկան, որոշները դեռ կան:
Դրանք բոլորն ունեն իրենց պահերը
Միրահարության և ընկերության, ես դեռ հիշում եմ նրանց.
Ոմանք արդեն չկան, ոմանք դեռ ողջ են,
Եվ իմ կյանքում ես սիրել եմ բոլորին:

Մակայն նրանցից ոչ ոք չէր կարող
Քեզ հետ համեմատվել...
Եվ իմ այս հուշերը կորցնում են իրենց իմաստը,
Երբ ես սերը որպես նոր բան եմ ընկալում,
Թեև գիտեմ, որ երբեք չեմ կորցրել սերս
Նախկինում եղած մարդկանց և իրերի հանդեպ:

Գիտեմ, որ հաճախ կանգ կառնեմ և կհիշեմ նրանց,
Բայց իմ կյանքում ես քեզ ավելի շատ եմ սիրում:

Թեև գիտեմ, որ երբեք չեմ կորցրել սերս
Նախակինում եղած մարդկանց և իրերի հանդեպ,
Գիտեմ, որ հաճախ կանգ կառնեմ և կհիշեմ նրանց,
Բայց իմ կյանքում ես քեզ ավելի շատ եմ սիրում,
Իմ կյանքում ես քեզ ավելի շատ եմ սիրում:

Ելակի դաշտերը հավերժ են

Ցած իջեք, խնդրեմ, քանզի ես գնում եմ Ելակի Դաշտեր.
Ոչինչ իրական չէ և ոչնչից կախված չէ.
Ելակի Դաշտերը հավերժ են:

Փակ աչքերով ապրելը հեշտ է, զի ոչինչ չես տեսնում, որ հասկանաս:
Դժվար է ինքնություն ունենալ, բայց ինքնին ստացվում է,
Եվ դա այնքան էլ կարևոր չէ ինձ համար.
Ցած իջեք, խնդրեմ, քանզի ես գնում եմ Ելակի Դաշտեր.
Ոչինչ իրական չէ և ոչնչից կախված չէ:
Ելակի Դաշտերը հավերժ են:

Ես կարծում եմ, որ ծառս դատարկ է, բայց, մեկ է, այն կամ բարձր է կամ
ցածր:
Այսինքն, թեև լարել չգիտեք, բայց ամեն ինչ կարգին է, և դա երևի այնքան
էլ վատ չէ:
Ցած իջեք, խնդրեմ, քանզի ես գնում եմ Ելակի Դաշտեր.
Ոչինչ իրական չէ և ոչնչից կախված չէ:
Ելակի Դաշտերը հավերժ են:

Միշտ, ոչ երբեմն, թվում է՝ ես եմ, բայց, կարծում եք գիտե՞մ, երբ է դա
երբազ:
Կարծում եմ՝ գիտեմ, որ «Այո»-ի տակ նկատի ունեմ ինչ-որ սխալ բան,

Ինչին երևի ես համաձայն չեմ:
Ցա՛ծ իջեք, խնդրեմ, քանզի ես գնում եմ Ելակի Դաշտեր.
Ոչինչ իրական չէ և ոչնչից կախված չէ:
Ելակի Դաշտերը հավերժ են,
Ելակի Դաշտերը հավերժ են,
Ելակի Դաշտերը հավերժ են:

Լոռամրգի հյուր,
Լոռամրգի հյուր...

Կյանքի մեկ օրը

Ես այսօր կարդացի լուրերում, տղե՛րք,
Մի հաջողակ մարդու մասին, ով հասել է գնահատանքի
Եվ չնայած լուրը բավականին տխուր էր,
Բայց ծիծաղս բռնեց,
Երբ տեսա լուսանկարը.
Նա խելքը թոցրել էր մեքենայի մեջ
Եվ չէր նկատել, որ լույսերը փոխվել են.
Մարդկանց ամբոխը կանգնած նայում էր.
Նախկինում բոլորը տեսել էին նրա դեմքը,
Բայց ոչ ոք իսկապես վստահ չէր լինի,
Եթե նա լիներ Լորդերի պալատից:

Ես այսօր մի ֆիլմ տեսա, տղե՛րք,
Անգլիական բանակը նոր էր հաղթել պատերազմում
Մարդկանց ամբոխը շրջվեց ուրիշ կողմ
Իսկ ես ընդամենը մի հայացք նետեցի
Ու ձեռիս գիրքը կարդացի:

Ես կուզենայի, որ միանաք ինձ...

Արթնացա, անկողնուցս իջա,
Մանրը շարժեցի գլխիս վրայով,
Ճամփա ընկա ներքև և խմեցի մի բաժակ,
Հետո վեր նայեցի, տեսա, որ ուշացել եմ:
Գտա վերարկուս, վերցրի գլխարկս.
Մի քանի վայրկյանից ավտոբուսն եկավ,
Ոտիս տեղ արի, որ վեր բարձրանամ, հետո ծխեցի,
Ինչ-որ մեկը խոսեց, և ես երազի մեջ ընկա...

Ես այսօր կարդացի լուրերում, տղե՛րք,
Չորս հազար անցք են գտել Բլեքբերնում ու Լանկաշիրում
Եվ, չնայած անցքերը բավականին փոքր են,
Նրանք ստիպված են բոլորը հաշվել.
Հիմա նրանք գիտեն քանի անցք է պետք
Ալբերտի Սրահը լցնելու համար:

Ես կուզենայի, որ միանաք ինձ...

Հեղափոխություն

Ասում եք՝ հեղափոխություն՞ ւն եք ուզում...

Դե, դո՛ւք գիտեք.

Բոլորս էլ ուզում ենք փոխել աշխարհը:

Ինձ ասում եք, թե դա եվոլյուցիա՞ է...

Դե, դո՛ւք գիտեք.

Բոլորս էլ ուզում ենք փոխել աշխարհը:

Բայց երբ խոսում եք ոչնչացման մասին,

Չգիտե՞ք, որ կարող եք ինձ էլ շարքից հանել,

Չգիտե՞ք, որ դա շատ լավ կլինի,

Շա՛տ լավ, շա՛տ լավ...

Ասում եք՝ գտել եք իրական լուծո՞ւմ...

Դե, դո՛ւք գիտեք.

Միրով կուզենայինք տեսնել ձեր պլանը:

Դեռ մի քան էլ ինձնից ներդրո՞ւմ եք խնդրում...

Դե, դո՛ւք գիտեք.

Մենք անում ենք մեր կարեցածին չափ:

Բայց երբ փող եք ուզում մարդկանց ատելու համար,

Ես միայն կասեմ ձեզ՝ եղբայրնե՛ր, պետք է սպասեք.

Չգիտե՞ք, որ շատ լավ կլինի,

Շա՛տ լավ, շա՛տ լավ...

Ասում եք՝ կփոխե՞ք սահմանադրությունը...

Դե, դո՛ւք գիտեք.

Բոլորս էլ ուզում ենք ձեր գլխից ազատվել:

Ինձ ասում եք, որ դա հաստատությո՞ւն է...

Դե, դո՛ւք գիտեք.

Փոխարենն ավելի լավ է ազատեք ձեր միտքը.

Բայց եթե գնում եք նախագահ Մաոյի նկարները բռնելու,

Ապա ոչ ոքի հետ ոչնչի չեք հասնի ոչ մի կերպ.

Չգիտե՞ք, որ շատ լավ կլինի,

Շա՛տ լավ, շա՛տ լավ...

Բայլադ Ջոնի և Յոկոյի մասին

Մաութհենփոնի նավամատույցում կանգնած՝

Փորձում ենք հասնել Հոլանդիա կամ Ֆրանսիա.

Համազգեստավոր մեկն ասաց. «Դուք պետք է վերադառնաք».

Բայց չէ՞-որ նրանք մեզ ոչ մի շանս չեն տա:

Քրիստոս... Չէ՞-որ, որ դա հեշտ գործ չէ,

Չգիտե՞ք, թե որքան դժվարություններ կան.

Ինչպես էլ գործերն ընթանան,

Մեկ է, ինձ կխաչեն...

Վերջապես ինքնաթիռն իջավ Փարիզում,
Մեղրամիսն անցավ Մենա գետի մոտերքը,
Փիթեր Բրաունը զանգեց և ասաց.
«Լավ կանեք պսակվեք
Զիբրայթարում՝ Իսպանիայի մոտերքը»:

Քրիստոս... Չէ՞-որ, որ դա հեշտ գործ չէ,
Զգիտե՞ք, թե որքան դժվարություններ կան.
Ինչպես էլ գործերն ընթանան,
Մեկ է, ինձ կխաչեն...

Փարիզից քշեցինք Ամստերդամ, Հիլթոն,
Մեկ շաբաթ զրուցեցինք անկողնու մեջ,
Թերթերը հարցրին՝ անկողնում ինչն՞վ էք զբաղված,
Պատասխանեցի՝ փորձում ենք խաղաղվել:

Քրիստոս... Չէ՞-որ, որ դա հեշտ գործ չէ,
Զգիտե՞ք, թե որքան դժվարություններ կան.
Ինչպես էլ գործերն ընթանան,
Մեկ է, ինձ կխաչեն...

Գումար ինայեցինք անձրևոտ օրը,
Ամբողջ հագուստը նվիրեցինք բարեգործությանը,
Անցած գիշեր էլ կինս ասաց.
«Տղա՛ ջան, երբ մեռած ես, հոգուց բացի ոչինչ չես տանում հետդ»:
Մտածի՛ր...

Կայծակնային ուղևորություն կատարեցինք Վիեննա,
Կերանք տոպրակի միջի շոկոլադե տորթը,
Թերթերը գրեցին.
«Կինը նստել է նրա գլխին,
Նմանվել են քարշ եկող երկու գուրուների»:

Քրիստոս... Չէ՞-որ, որ դա հեշտ գործ չէ,
Զգիտե՞ք, թե որքան դժվարություններ կան.

Ինչպես էլ գործերն ընթանան,
Մեկ է, ինձ կխաչեն...

Վաղաժամ ինքնաթիռի տոմս առա դեպի Լոնդոն՝
Հիտուն կաղին կապած պարկի մեջ.
Մամուլում գրեցին. «Ձեզ հաջողություն ենք մաղթում,
Լավ է, որ երկուսդ էլ հետ եք գալիս»:

Քրիստոս... Չէ՞-որ, որ դա հեշտ գործ չէ,
Չգիտե՞ք, թե որքան դժվարություններ կան.
Ինչպես էլ գործերն ընթանան,
Մեկ է, ինձ կխաչեն,
Ինչպես էլ գործերն ընթանան,
Մեկ է, ինձ կխաչեն...

Անձրև

Եթե անձրև է գալիս,
Նրանք փախչում են և ծածկում իրենց գլուխները.
Նրանք նույն կերպ կարող են և մեռնել,
Եթե անձրևը գալիս է,
Եթե անձրևը գալիս է:

Երբ արևը փայլում է,
Նրանք թաքնվում են ստվերում (երբ արևը փայլում է)
Եվ խմում իրենց լիմոնադները (երբ արևը փայլում է),
Երբ արևը փայլում է,
Երբ արևը փայլում է:

Անձրևին
Ես դեմ չեմ,
Արևի փայլելն էլ՝

Լավ եղանակի նշան է,
Ես կարող եմ ձեզ ապացուցել,
Որ, երբ սկսում է անձրև գալ (երբ անձրև է տեղում),
Ամեն ինչ նույնն է մնում (երբ անձրև է տեղում)
Ես կարող եմ ձեզ ապացուցել...
Ես կարող եմ ձեզ ապացուցել:

Անձրևին
Ես դեմ չեմ,
Արևի փայլելն էլ՝
Լավ եղանակի նշան է.
Լսո՞ւմ եք ինձ...
Երբ անձրև է գալիս և արևը փայլում է (երբ անձրև է գալիս և արևը
փայլում է),
Դա պարզապես մտապատկեր է (երբ անձրև է գալիս և արևը փայլում է).
Լսո՞ւմ եք ինձ...
Լսո՞ւմ եք ինձ...

Sdeah reihit edih dna nur yeht...
Semoc niar eht fi... (անձրև)
Niar... (անձրև)
Senihs nus... (անձրև)

Հավաքվե՛ք...

Ահա եկավ ձեր տափակ գլուխը, սկսեց դանդաղ վեր ելնել.
Նա ունի ջու-ջու ակնախնձոր, մի սուրբ ֆռռացնող է.
Մազերն իջել են մինչև ծնկները.
Պետք է որ հանաքջի լինի, պարզապես անում է այն, ինչ ուզում է:

Նա կոշիկ չի կրում, ոտքի մատներով է ֆուտբոլ խաղում.
Կապիկի դիպուկ մատ ունի, կրակում է կոկա-կոլայի վրա
Եվ ասում է. «Ես ճանաչում եմ քեզ, դու ճանաչում ես ինձ».

Այսքանը կասեմ ձեզ՝ պետք է ձեզ ազատ զգաք.
Հավաքվե՛ք հենց հիմա, քշեք ինձ վրա:

Նա պայուսակներ է արտադրում, ունի ծովափնյա գմբեթ,
Ունի Օոո խորտկարան, ողնաշար ջարդող է,
Ոտքերն իջել են ծնկներից ցած
Պինդ բռնեք բազկաթռոխց, թե չէ կարող եք վարակվել նրանից.
Հավաքվե՛ք հենց հիմա, քշեք ինձ վրա:

Նա գցող-բռնող է, վաղաժամ նախագգուշացում ունի,
Պղտոր ջրեր ունի և մեկ mojo ֆիլտր
Եվ ասում է. «Մեկ, մեկ և մեկ՝ կլինի երեք».
Պետք է գեղեցիկ լինի, այլապես դժվար կերևա.
Հավաքվե՛ք հենց հիմա, քշեք ինձ վրա:

Տիեզերքի միջով

Բառերն անվերջ անձրևի պես հոսում են թղթե բաժակի մեջ.
Նրանք անգուսպ սահք ունեն, երբ սահում են տիեզերքով մեկ.
Թախծի ավազաններ, ցնծության ալիքներ են անցնում իմ բաց մտքով՝
Տիրելով ու գուրգուրելով ինձ.

Ջա՛յ, գուրու դից, ՕՄ...

Ոչնչով չի փոխվում իմ աշխարհը,
Ոչնչով չի փոխվում իմ աշխարհը,
Ոչնչով չի փոխվում իմ աշխարհը,
Ոչնչով չի փոխվում իմ աշխարհը...

Փշրված լույսի պատկերներ, որոնք միլիոն աչքերի պես պար են բռնել իմ
դեմ.

Նրանք կանչում են ինձ տիեզերքի միջով.

Մտքերն անհանգիստ քամու պես պտտվում են փոստարկղիս ներսում,

Կուրորեն ցած են իջնում, ասես ճանապարհ են հարթում տիեզերքի միջով.

Ջա՛յ, գուրու դից, ՕՄ...

Ոչնչով չի փոխվում իմ աշխարհը,
Ոչնչով չի փոխվում իմ աշխարհը,
Ոչնչով չի փոխվում իմ աշխարհը,
Ոչնչով չի փոխվում իմ աշխարհը...

Զնգում են կյանքի երանգների ծիծաղկոտ ձայները,
Բաց ականջներիս միջով հրապուրում, հրավիրում են ինձ.
Անսահման անմահ սեր է փայլում շուրջս միլիոն արևի պես
Եվ կանչում է ինձ տիեզերքի միջով.

Ջա՛յ, գուրու դից, ՕՄ...

Ոչնչով չի փոխվում իմ աշխարհը,
Ոչնչով չի փոխվում իմ աշխարհը,
Ոչնչով չի փոխվում իմ աշխարհը,
Ոչնչով չի փոխվում իմ աշխարհը...

Ջա՛յ, գուրու դից, ՕՄ...

Ջա յ, գուրու դից, ՕՄ...

...

Դա միայն սեր է

Ես վեր եմ թռչում, երբ տեսնում եմ քեզ կողքովս անցնելիս, ա՛յ, իմ յար,
Երբ հառաչում ես, յա՛ր ջան, իմ ներսում ասես թևում են թիթեռներ:
Ինչո՞ւ եմ այսքան ամաչկոտ քո կողքին...

Դա միայն սեր է և վերջ:

Ինչու՞ եմ ունենամ այսպիսի զգացմունքներ...

Դա միայն սեր է և վերջ:

Բայց այնքա՛ն դժվար է քեզ սիրելը...

Ճի՞շտ է, որ մենք իրար կգգենք ամեն գիշեր:

Միայն գիշերով է հայացքդ դառնում պայծառ, շա՛տ պայծառ.

Իրավունք չունե՞մ, ինչ է, դրան նպաստելու, յա՛ր ջան.

Դա միայն սեր է և վերջ:

Ինչու՞ եմ ունենամ այսպիսի զգացմունքներ...

Դա միայն սեր է և վերջ:

Բայց այնքա՛ն դժվար է քեզ սիրելը,

Այո՛, շա՛տ դժվար է քեզ սիրելը,

Քեզ սիրելը...